



Protection of Rights
Without Borders NGO



NATIONAL
ENDOWMENT
FOR
DEMOCRACY

SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հետազոտություն

Երևան | 2026

Զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Դատական բարեփոխումների իրազեկվածության բարձրացում և իրավաբանական աջակցության տրամադրում» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Նինա Հակոբյանը և Աննա Մելիքյանը: Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
Մեթոդաբանություն	7
1. Հարկային օրենսգրքում փաստաբանների կողմից վճարման ենթակա հարկի առնչությամբ կատարված փոփոխությունները և դրանց հիմնավորումները.	9
1.1. Փաստաբանների պալատի դիրքորոշումը.....	13
1.2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը.....	14
1.3. Օրենքի ընդունումը և քաղաքացիական հասարակության արձագանքը.	15
2. Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների սահմանադրաիրավական խնդիրը.	18
3. Հարկային նոր քաղաքականության կիրառման արդյունքները. պրակտիկ խնդիրներ. 27	
3.1. Շուկայի կառուցվածքային փոփոխությունները և տնտեսավարողների դինամիկան. 27	
3.2. Հարկային բեռի փաստացի պատկերը օրենսդրական փոփոխություններից հետո և ծառայությունների գնաճը.	37
3.2.1. Հարկային բեռի ավելացում.....	37
3.2.2. Ծախսագրման և ԱԱՀ հաշվանցման սահմանափակ հնարավորությունները.	42
4. Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված խնդիրները պայմանավորված հարկային բեռի փոփոխություններով.	44
4.1. Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունները. Սահմանադրական երաշխիքներ և գործնական խոչընդոտներ.	47
4.1.1. Հանրային պաշտպանի գրասենյակի լրակազմը և ֆինանսավորումը.....	47
4.1.2. Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը.....	52
4.2. Կամավոր անհատույց իրավաբանական օգնության (pro bono) հարկման պրակտիկ խնդիրները.	59
4.2.1. Pro Bono օգնության դերը և պետության պոզիտիվ պարտավորությունը.....	59
4.2.2. Պետության հոշակած քաղաքականությունը՝ Pro Bono մեխանիզմի զարգացման հարցում.....	59
4.2.3. Օրենսդրական փոփոխությունները. Pro Bono ծառայությունների մատուցման՝ օրենսդրորեն սահմանումը և շահառուների շրջանակի ընդլայնումը.	61
4.2.4. Փաստաբանների պալատի կարգավորումներով սահմանված Pro Bono խրախուսման չափանիշները.....	62
4.2.5. Ներդրված Pro Bono մեխանիզմի գործնական անիրագործելիությունը.....	64
4.2.6. Հարկային բեռի հետևանքները՝ գործերի մերժում, խոցելի խմբերի պաշտպանության սահմանափակում և ՀՊԳ-ի բեռի աճ.	69
4.2.7. Արտոնության շահառուների նեղ շրջանակը և մեխանիզմի սահմանափակ գործնական արժեքը.....	70
4.2.8. Միջազգային չափանիշների հետ անհամապատասխանությունը.	73
4.2.9. Անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերող այլ սուբյեկտների խնդիրները. 74	
4.2.10. Ծանրաբեռնվածության վերադարձը Հանրային պաշտպանի գրասենյակին.	76
4.2.11. Արդարադատության մատչելիության այլ զուգահեռ խոչընդոտները.	77
ԱՍՓՈՓՈՒՄ	79
Առաջարկություններ	87
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	91
Հավելված 1	91
Հավելված 2	91
Հավելված 3	91

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ - Ավելացված արժեքի հարկ

ԱԺ - Ազգային ժողով

ԱԶ - Անհատ ձեռնարկատեր

ԵՄՀ - Եվրասիա միջազգային համալսարան

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՀԿ - Հասարակական կազմակերպություն

ՀՕ - Հայաստանի Հանրապետության օրենք

ՀՊԳ - Հանրային պաշտպանի գրասենյակ

ՄԻԵԴ - Մարդու իրավունքների եվրոպական դատարան

ՄԻԵԿ - Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

ՄԻՊ - Մարդու իրավունքների պաշտպան

ՊԵԿ - Պետական եկամուտների կոմիտե

ՄԴ - Սահմանադրական դատարան

ՍՊԸ - Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՎԶ - Վայոց ձոր

ՏԳՏԴ - Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ

ՓԲԸ - Փակ բաժնետիրական ընկերություն

ՓՊ - Փաստաբանների պալատ

Կազմակերպություն- «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության մատչելիությունը և որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնապուններն են, որոնք երաշխավորված են ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Սակայն Հայաստանի Հանրապետությունում վերջին շրջանում իրականացված օրենսդրական և համակարգային փոփոխությունները ստեղծել են մի իրավիճակ, որում սահմանադրական այս երաշխիքների իրացումը բախվում է աննախադեպ ֆինանսական և ինստիտուցիոնալ խոչընդոտների: 2024 թվականի հունիսի 12-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքը, որով փաստաբանական ծառայությունները տեղափոխվեցին հարկման ընդհանուր համակարգ, արդար դատաքննության իրավունքի իրացման հարցում առաջացրել է լուրջ մարտահրավերներ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ փաստաբանական ծառայությունների մատուցումը, ի տարբերություն սովորական բիզնես գործունեության, ունի իրավապաշտպան բնույթ, ինչն ամրագրված է նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով: Մինչև 2025 թվականի հունվարի 1-ը փաստաբանական ծառայություններ մատուցողների ճնշող մեծամասնությունը գործում էր շրջանառության հարկի դաշտում (5% դրույքաչափով): Նոր փոփոխություններով փաստաբանները (թե՛ անհատ ձեռնարկատերերը, թե՛ իրավաբանական անձինք) պարտադրված են վճարել 20% ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)՝ անկախ շրջանառության ծավալից, ինչպես նաև շահութահարկ՝ ընդհանուր հարկման կանոններով: Հարկման ընդհանուր համակարգի այս կտրուկ անցումը հաշվի չի առել փաստաբանական գործունեության առանձնահատուկ իրավապաշտպան բնույթը, հասարակության լայն շրջանակների վրա ազդեցությունը և այն դիտարկել է որպես զուտ առևտրային գործունեություն: Օրենսդրական նոր պայմաններում անվճար իրավաբանական օգնության տրամադրումը փաստաբանների համար դարձել է հարկային և վարչարարական առումով ռիսկային: Թեև հետագայում սահմանվել է 5% շեմով հարկային բացառություն, այն ունի սահմանափակ կիրառություն և չի վերացնում փաստաբանների մտահոգությունները կամավոր անհատույց օգնություն տրամադրելու հարցում: Մասնավոր ծառայությունների

թանկացմանը զուգահեռ՝ 2025 թվականի բյուջեով չի պահպանվել 2024 թվականի երկրորդ կեսին հատկացված լրացուցիչ 15 հաստիքների ֆինանսավորումը, ինչի հետևանքով ՀՊԳ-ի հաստիքների թիվը 84-ից նվազել է 73-ի՝ 11 հաստիքով: Սա ստեղծել է վտանգավոր խնդիր՝ անվճար օգնության պահանջարկը կտրուկ աճել է, սակայն պետական համակարգի կարողությունները նվազել են:

Հետազոտությունն իրականացվել է փոփոխություններն ուժի մեջ մտնելուց շուրջ մեկ տարվա ընթացքում, և դրանից հետո, ինչը հնարավորություն է տվել փաստական տվյալների և փորձագիտական հարցազրույցների միջոցով վեր հանել արդարադատության մատչելիության խաթարման պրակտիկ կոդերը: Հետազոտությունը փաստում է, որ անձանց իրավունքների պաշտպանությունը ներկայումս խոչընդոտվում է մի քանի զուգահեռ արգելքների հանրագումարով.

- **Ֆինանսական անմատչելիություն.** հարկային բեռի կտրուկ ավելացումը հանգեցրել է փաստաբանական ծառայությունների սակագների 30-50% աճի: Քանի որ փաստաբանական գործունեությունը չունի զգալի նյութածախս, ԱԱՀ-ն ամբողջությամբ ծանրանում է վերջնական սպառողի՝ քաղաքացու վրա: Իրավական պաշտպանությունը վերածվել է ֆինանսական լուրջ խոչընդոտի, ինչը քաղաքացիներին ստիպում է ընդհուպ մինչև կամավոր հրաժարվել իրենց իրավունքների պաշտպանությունից:

- **Անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանափակում.** օրենսդրական նոր պայմաններում փաստաբանները ստիպված են հարկեր վճարել նույնիսկ այն ծառայությունների համար, որոնց դիմաց վարձատրություն չեն ստանում, ինչը փաստաբաններին ստիպում է հրաժարվել կամավոր անհատույց իրավաբանական աջակցությունից (Pro Bono)՝ հարվածելով առավել խոցելի խմբերին: Թեև հետագայում սահմանվել է անվճար իրավաբանական ծառայությունների մասով 5% շեմով որոշակի հարկային բացառություն, այն կիրառելի է սահմանափակ շրջանակում, ունի վարչարարական բարդություններ և չի վերացնում այն ռիսկը, որ փաստաբանները կխուսափեն ավելի մեծ ծավալով անվճար աջակցություն տրամադրելուց:

- **Հանրային պաշտպանի գրասենյակի ռեսուրսների կրճատում.** 2025 թվականին չի պահպանվել նախորդ տարվա երկրորդ կեսին ՀՊԳ-ին հատկացված լրացուցիչ հաստիքային ֆինանսավորումը, ինչի հետևանքով հանրային պաշտպանների հաստիքների թիվը 84-ից նվազել է 73-ի: Այս պայմաններում ՀՊԳ-ն շարունակում է գործել բարձր ծանրաբեռնվածության պայմաններում: Առկա է ռիսկ, որ ՀՊԳ-ն, ծայրահեղ

ծանրաբեռնվածության պատճառով, այլևս չի կարող բոլոր գործերով ապահովել ժամանակին, լիարժեք և որակյալ իրավաբանական աջակցություն,

- **Համակարգային խնդիրներ.** պետական տուրքերի բազմապատիկ աճը, մարզային դատարանների նստավայրերի փակումը և դատավարության էլեկտրոնայնացումը ձևավորել են իրավիճակ, որում քաղաքացին այլևս ի վիճակի չէ նույնիսկ ինքնուրույն իրացնել իր դատական պաշտպանության իրավունքը:

Սույն զեկույցը նպատակ ունի համակողմանիորեն վերլուծել արդարադատության մատչելիությունը՝ հարկային բեռի ավելացման, Pro Bono (անհատույց) ծառայությունների կրճատման, Հանրային պաշտպանի գրասենյակի ռեսուրսների սակավության, պետական տուրքի ավելացման և համանման զարգացումների պայմաններում:

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդների համադրությամբ՝ ապահովելու տվյալների օբյեկտիվությունն ու հավաստիությունը:

1. *Իրավական ակտերի ուսումնասիրություն.* ուսումնասիրվել են «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքը, դրա ընդունման հիմնավորումները և հարակից իրավական ակտերը, «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ վերաբերելի օրենսդրությունը և միջազգային իրավական ակտերը:

2. *Վիճակագրական վերլուծություն.* հարցումներ են ուղղվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեին, Հանրային պաշտպանի գրասենյակին, Վիճակագրական կոմիտեին, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը, Փաստաբանների պալատին, Երևան քաղաքի և մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, Վարչական դատարանին՝ ստանալու տվյալներ ԱԱՀ վճարող դարձած փաստաբանների, գործունեությունը դադարեցրած ԱԶ-ների, հավաքագրված հարկերի, փաստաբանների՝ դատարանում ներգրավվելու բարդությունների և այլ հարցերի վերաբերյալ:

3. *Առցանց հարցում ՀՀ-ում գործող փաստաբանների շրջանում.* Հարցմանը մասնակցել է 47 փաստաբան: Հարցմամբ տեղեկություններ և կարծիքներ են հավաքագրվել առ այն, թե ինչպես է ազդել հարկային ռեժիմի փոփոխությունը փաստաբանական ծառայությունների վճարների բարձրացման և անվճար փաստաբանական ծառայությունների մատուցման վրա:

4. *Հանրային պաշտպանի գրասենյակի տվյալների վերլուծություն.* վերլուծվել են Հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքացուցակի, դիմողների քանակի և մերժումների վիճակագրական պատկերը 2023-2025թթ. կտրվածքով:

5. *Փորձագիտական հարցազրույցներ.* անցկացվել են հարցազրույցներ ՀՀ փաստաբանների պալատի ղեկավար կազմի, անհատ փաստաբանների, փաստաբանական գրասենյակների և իրավապաշտպան ՀԿ-ների ներկայացուցիչների հետ՝ վերհանելու գործնական խնդիրները, որոնց առնչվել են վերջիններս հարկային բեռի փոփոխությունից հետո:

6. *Մեղիա նյութերի ուսումնասիրություն.* ուսումնասիրվել են լրատվամիջոցների հրապարակումները խնդրի վերաբերյալ:

1. Հարկային օրենսգրքում փաստաբանների կողմից վճարման ենթակա հարկի առնչությամբ կատարված փոփոխությունները և դրանց հիմնավորումները.

ՀՀ-ում մինչև 2024 թվականի հունիսի 12-ին Ազգային ժողովի կողմից ընդունված վերաբերելի օրենսդրական փոփոխությունները փաստաբանական ծառայություններ մատուցող անձանց համար գործում էր հետևյալ հարկային ռեժիմը՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար գործում էր շրջանառության շեմ (115 միլիոն ՀՀ դրամ), որը գերազանցելու դեպքում միայն վերջիններս անցնում էին հարկման ընդհանուր համակարգ (ԱԱՀ), հակառակ դեպքում վերջիններս կարող էին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու միջոցով համարվել շրջանառության հարկ վճարող՝ վճարելով 5% շրջանառության հարկ՝ նշված ոլորտում գործունեություն ծավալելու համար (Հարկային օրենսգիրք, հոդված 254):¹ Շրջանառության հարկի համակարգում գործող ԱԶ-ները վճարում էին նաև ամսական 5,000 դրամ հաստատագրված շահութահարկ (Հոդված 125.3):

2024 թվականի հունվարի 18-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ <https://www.e-draft.am> հարթակում հանրային քննարկման դրվեց ՀՀ ֆինանսների նախարարության հեղինակած՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (տեքստում՝ նաև Նախագիծ),² որի առանցքային թիրախներից մեկը փաստաբանական և նոտարական ծառայություններն էին: Նախագծով, ի թիվս այլնի, նախատեսվում էր, որ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել փաստաբանական ծառայություն մատուցողները: Այսպես՝ Կառավարության հիմնավորմամբ՝ շրջանառության հարկի համակարգը, որը ստեղծված էր որպես պարզեցված և այլընտրանքային տարբերակ, փաստացի վերածվել էր «հարկման արտոնյալ համակարգի»: Ըստ նախագծի հիմնավորման՝ «*նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է շրջանառության հարկի համակարգի և հարկման ընդհանուր համակարգի հարկային բեռերի միջև տարբերության կրճատման, տնտեսավարող սուբյեկտների կողմից կատարվող ծախսերի փաստաթղթավորման խթանները մեծացնելու, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների համար նախատեսված երկու հարկման համակարգերն ավելի հասցեական դարձնելու նպատակադրումներից*»: Ըստ էության, նախագծի հեղինակները

¹ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք» ՀՀ օրենք, ընդունված՝ 04.10.2016թ. (մինչև 12.06.2024թ. խմբագրությամբ), <https://www.arlis.am/hy/acts/190955>

² «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/6762/about>

պնդել են, որ փաստաբանական և նախագծով թիրախավորվող այլ տեսակի գործունեություն ծավալողները պետք է շահագրգռված լինեն իրենց գործունեությունը ավելի շատ փաստաթղթավորել, եթե ցանկանում են նվազեցնել հարկային բեռը:

Հետազոտության տեսանկյունից խնդրահարույց է այն, որ Նախագծի հիմնավորման մեջ առանձին չի բացատրվել, թե ինչու փաստաբանական ծառայությունները պետք է հարկվեն այլ ռեժիմով, ավելին՝ բացակայում է ՀՀ բնակչության իրավաբանական օգնության հասանելիության, մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության վրա հնարավոր ազդեցության գնահատում, այդ թվում՝ փաստաբանական ծառայությունների հասանելիության առումով, հակառակը՝ շեշտադրվում է միայն ակնկալվող հարկային մուտքերի ավելացումը:

Բացի այդ, ռազմավարությունների հետ կապ մասում հիշատակվում է միայն, որ այն բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 6.8-րդ «Հարկաբյուջետային քաղաքականություն» մասով սահմանված քաղաքականության ուղղություններից, ըստ որի՝ հարկման համակարգում հարկային բեռի արդարացի և հավասար բաշխումն ապահովելու նպատակով հարկման տարբեր համակարգերի միջև սահմանվելու է համադրելի և արդարացի հարկային բեռ: Մինևույն ժամանակ անտեսվում է, որ 2022-2026թթ. դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված էր անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակի ընդլայնում, անհատույց իրավաբանական օգնության (Pro Bono) տրամադրման կառուցակարգերի զարգացում, այդ թվում՝ փաստաբանների առնվազն 10%-ի ներգրավում pro bono էլեկտրոնային հարթակում, հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը մինչև 30%-ով թեթևացնելու նպատակ և այլն³:

Ավելին՝ մինչև e-draft հարթակում նախագծի տեղադրումը որևէ քննարկում մասնագիտական համայնքի հետ տեղի չի ունեցել:

Նախագիծն արժանացավ սուր քննադատության և դիմադրության: Հենց <https://www.e-draft.am> հարթակում օգտատերերի (հիմնականում փաստաբաններ և իրավապաշտպան կազմակերպություններ) կողմից ներկայացված բազմաթիվ բողոքներն

³ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1133-Ն որոշումը, <https://www.arlis.am/hy/acts/166582>

ու առաջարկությունները բարձրացրին մի շարք մտահոգություններ⁴։ Մասնավորապես՝ հիմնական բողոքները և առարկությունները վերաբերում էին հետևյալ խումբ խնդիրներին.

Իրավապաշտպան գործունեության և «բիզնեսի» նույնացում. ըստ ներկայացված կարծիքների՝ օգտատերերը նշում էին, որ Նախագծով փաստաբանական գործունեությունը հարկային տեսանկյունից հավասարեցվել է շահումով խաղերին և խաղատներին։ Շեշտվել է, որ փաստաբանությունը Սահմանադրությամբ ամրագրված իրավապաշտպան գործառույթ ունի, և այն նույն հարթության վրա դնելը բարձր շահութաբերություն ունեցող զվարճանքի բիզնեսների հետ վկայում է պետական մարմինների կողմից ոլորտի դերի թուրլանկալման մասին։

1. *Արդարադատության մատչելիության խաթարում.* Բազմաթիվ կարծիքներում նշվում էր, որ այս փոփոխության իրական տուժողը ոչ թե փաստաբանն է, այլ սպառողը՝ քաղաքացին։ Հարկային բեռի կտրուկ ավելացումը՝ շրջանառության հարկից անցումը ԱԱՀ-ի և շահութահարկի դաշտ, ուղղակիորեն կհանգեցնի սակագների թանկացման (ըստ ներկայացված կարծիքների՝ կարող էր հասնել մինչև 2-3 անգամի)։ Սա փաստաբանական ծառայությունները կդարձնի անհասանելի հատկապես ֆիզիկական անձանց և խոցելի խմբերի համար՝ խոչընդոտելով Սահմանադրությամբ երաշխավորված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացումը։

2. *Անհատ ձեռնարկատեր փաստաբանների գործունեության դժվարացում, մենաշնորհացման ռիսկեր.* նշվել է, որ բարձր հարկային բեռը սահմանափակելու է անհատ ձեռնարկատեր փաստաբանների գործունեությունը։ Բացի այդ, ԱԱՀ դաշտ անցնելը ենթադրում է բարդ հաշվապահական հաշվառում և հարկային մարմինների կողմից առավել խիստ միջամտություն, ինչը կարող է դառնալ անուղղակի ճնշման լծակ։

3. *Ստվերային շրջանառության խթանում.* կարծիքներում նշվել է, որ հարկային ռեժիմի նման խստացումը փաստաբաններին կմղի դեպի «ստվերային» պայմանավորվածություններ։ Սա ոչ միայն չի ավելացնի բյուջեի մուտքերը, այլև կվնասի վստահորդներին՝ զրկելով նրանց դատական ծախսերի լիարժեք փոխհատուցման հնարավորությունից։

Ամփոփելով՝ հարթակում ներկայացված բազմաթիվ առաջարկների հեղինակները պահանջում էին կա՛մ Նախագիծը հանել շրջանառությունից, կա՛մ սահմանել

⁴ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ամփոփաթեթը, <https://www.e-draft.am/projects/6762/digest>

շրջանառության ողջամիտ շեմ (օրինակ՝ 50 կամ 115 մլն դրամ), որը չգերազանցելու դեպքում փաստաբանները կպահպանեին շրջանառության հարկ վճարողի կարգավիճակը:

Իրավապաշտպան կազմակերպությունները, այդ թվում՝ «Իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների» ՀԿ-ն ևս արձագանքել են Նախագծին, նշելով, որ Հարկային օրենսգրքի առաջարկվող փոփոխությունները, որոնք նախատեսում են փաստաբանական գործունեությունը տեղափոխել հարկման ընդհանուր դաշտ (20% ԱԱՀ և շահութահարկ), անհամաչափորեն կավելացնեն հարկային բեռը և կհանգեցնեն ծառայությունների կտրուկ թանկացման: Սա լրջորեն կվտանգի Սահմանադրությամբ երաշխավորված արդարադատության մատչելիությունը և որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ ծառայություններն անհասանելի դարձնելով հասարակության լայն շերտերի համար⁵:

Չնայած դժգոհություններին և առարկություններին, ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը 21.05.2024թ.-ին ընդգրկվեց Ազգային ժողովի օրակարգ⁶: Ավելին՝ Օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N 630-Ա որոշմամբ համարվել է անհետաձգելի⁷: Սա էական է, քանի որ անհետաձգելի ընթացակարգը սահմանափակում է նախագծի շուրջ երկարատև մասնագիտական քննարկումների և ազդեցության գնահատման հնարավորությունը:

ԱԺ օրակարգ ընդգրկված նախագծով, ի թիվս այլնի, նախատեսվում էր 2025թ. հունվարի 1-ից բացառել փաստաբանական ծառայություն մատուցող հարկ վճարողների գործունեությունը շրջանառության հարկի համակարգում, ինչի արդյունքում թե՛ անհատ ձեռնարկատերեր հանդիսացող փաստաբանները, թե՛ իրավաբանական անձինք վճարելու էին ԱԱՀ՝ 20 տոկոսի չափով՝ անկախ շրջանառության ծավալներից:

Նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում, հաշվի առնելով, որ փաստաբանական ծառայություններ մատուցողները գործելու էին հարկման ընդհանուր համակարգում, վերջիններս վճարելու էին նաև շահութահարկ՝ ընդհանուր դրույքաչափերով (մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելը անհատ ձեռնարկատեր փաստաբանները վճարում էին ամսական 5,000 ՀՀ դրամ ֆիքսված շահութահարկի գումար, իսկ իրավաբանական անձինք՝ 18 տոկոս շահութահարկի գումար): Նախագծով

⁵ Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարծիք-առաջարկը ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <https://prwb.am/2024/09/11/kartcikh-arajark/>

⁶ ՀՀ ազգային ժողովում Կ-839-03.05.2024-SՀ-011/2 օրինագծի Երկրորդ ընթերցման պատմությունը, <http://www.parliament.am/register.php?do=lracum&ID=711>

⁷ ՀՀ ազգային ժողովում Կ-839-03.05.2024-SՀ-011/2 օրինագծի պատմությունը, http://parliament.am/draft_history.php?id=14959

առաջարկվող փոփոխությունների արդյունքում վերանում էին նաև նշված արտոնությունները⁸:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները⁹, ՀՀ փաստաբանների պալատը¹⁰, Մարդու իրավունքների պաշտպանը¹¹ արձանագրել են, որ Նախագիծը խնդրահարույց է: Ստորև ներկայացվում են նշված դերակատարների հիմնական դիրքորոշումները և արձագանքները:

1.1. Փաստաբանների պալատի դիրքորոշումը.

Մի քանի ակումբի նիստեր են տեղի ունեցել, որոնց մասնակցել եմ, բողոքի ակցիաներ են եղել, վստահ եմ, որ նաև բանակցություններ են եղել:

Փաստաբան

Ի լրումն գրավոր կարծիք տրամադրելուն, քննարկումներին մասնակցելուն, փաստաբանական համայնքի ներկայացուցիչները կազմակերպել են բողոքի ակցիա և գործադուլ են իրականացրել¹²՝ պահանջելով Ազգային ժողովից «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծից հանել փաստաբաններին վերաբերող խնդրահարույց իրավակարգավորումները:

⁸ Նույն տեղում:

⁹ Տե՛ս, օրինակ՝ 2024թ. փետրվարին Մեղիա կենտրոնի «Հենման կետ» հաղորդման շրջանակում տեղի ունեցած քննարկումը փաստաբանական ծառայության թանկացման վերաբերյալ, <https://www.youtube.com/watch?v=RiGJOqn4Gbg>

¹⁰ Տե՛ս, օրինակ՝ «ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը դիմելու է ՀՀ նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին և պատգամավորներին՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար» վերնագրով նյութը, <https://www.advocates.am/news/view/3938.htm> 1; 16.05.2024թ.-ին ՓՊ կայքում տեղադրված հայտարարությունը, <https://www.advocates.am/news/view/3878.html> ; Հայտարարություն Ազգային ժողովում տեղի ունեցած աշխատանքային քննարկման մասին, <https://www.advocates.am/news/view/3928.html> ; «Տեղի կունենա փաստաբանների պալատի ակումբի նիստ «փաստաբանական գործունեության հարկային բեռի ավելացում» թեմայով» նյութը, <https://www.advocates.am/news/view/3877.html>

¹¹ Պաշտպանի դիրքորոշումը «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2934>

¹² Տե՛ս, օրինակ՝ «Փաստաբաններն իրականացրին բողոքի ակցիա՝ կարեվորելով փաստաբանական ինստիտուտի իրավապաշտպան առաքելությունը» <https://www.advocates.am/news/view/3887.html> ; «Փաստաբանները գործադուլ են անում հարկերի բարձրացման դեմ» <https://www.azatutyun.am/a/lawyers-strike-against-tax-hike/32957170.html>

Փաստաբանների պալատը ունեցել է քննարկումներ, առաջարկություններ են ներկայացվել Արդարադատության նախարարություն, եթե չեմ սխալվում, դիրքորոշումներ են ներկայացվել ՄԻՊ: Գնահատել արդյունավետությունը հնարավոր չէ, որովհետև որևէ մեկը չի կարող ասել՝ եթե արվել ավել կամ պակաս, փոփոխություն կլինե՞ր, թե՛ ոչ:

Փաստաբան

Փաստաբանների պալատը, որպես նշված նախագծի ընդունման արդյունքում առաջացող հիմնական խնդիրներ, նշել է, որ

- շեշտակի կրարձրանա փաստաբանական ծառայությունների ինքնարժեքը, հետևաբար՝ նաև գները,
- կբացառվի անվճար իրավաբանական օգնության տրամադրման (Pro Bono) հնարավորությունը, քանի որ այն նույնպես ենթակա է լինելու հարկման,
- անհամեմատ կավելանա Հանրային պաշտպանի գրասենյակ դիմողների քանակը, որն էլ իր հերթին ավելացնելու է պետության ֆինանսական պարտավորության բեռը,
- էականորեն կնվազի քաղաքացիների իրավաբանական օգնություն ստանալու մատչելիությունը և դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը: Այնուամենայնիվ, հնչեցված մտահոգությունները հաշվի չեն առնվել:

1.2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը.

Մարդու իրավունքների պաշտպանը, արձագանքելով Նախագծին, ի թիվս այլնի, նշել է, որ թեև պետությունն ունի հարկային քաղաքականությունը որոշելու լայն հայեցողություն, սակայն քննարկվող նախագծի առումով չի ներկայացվել միջազգային չափանիշներին համապատասխան՝ հարկային քաղաքականության փոփոխության իրավաչափությունը գնահատելու անհրաժեշտ հիմնավորում, չի ներկայացվել նոր կարգավորման՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի վրա հնարավոր ազդեցությունների ու ռիսկերի գնահատում, ինչպես նաև չեն իրականացվել պատշաճ հանրային իրազեկման աշխատանքներ և շահառուների հետ անհրաժեշտ քննարկումներ¹³:

¹³ ՄԻՊ դիրքորոշումը՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, <https://www.1lurer.am/hy/2024/04/25/1/1114621>

1.3. Օրենքի ընդունումը և քաղաքացիական հասարակության արձագանքը.

Չնայած վերստին բարձրացված բողոքի ալիքին, 12.06.2024թ.-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց¹⁴ ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:

Հաշվի առնելով, որ այս Նախագիծը դեռևս ենթակա էր ստորագրման ՀՀ նախագահի կողմից, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն, քաղաքացիական հասարակության մի շարք այլ ներկայացուցիչների հետ միասին, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, առաջարկ ներկայացրեց ՀՀ նախագահին՝ առաջարկելով 2024 թվականի հունիսի 12-ին Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի դրույթների՝ Սահմանադրության վերոգրյալ հոդվածներին համապատասխանությունը որոշելու նպատակով դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան:

Մասնավորապես, քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ահազանգում էին, որ.

- նախատեսվող կարգավորումների արդյունքում անհամեմատ բարձրացվում է փաստաբանական ծառայություններ մատուցող անձանց կողմից վճարվող հարկերի տոկոսաչափը, ինչը իր հերթին կարող է հանգեցնել փաստաբանական ծառայությունների արժեքի անհամեմատ բարձրացում,

- սա իր հերթին հանգեցնելու է նրան, որ իրավաբանական աջակցությունը ՀՀ-ում դառնա ոչ մատչելի հասարակության բոլոր խմբերի համար՝ հանգեցնելով անձանց խախտված իրավունքների վերականգնման անհնարինության,

- արդյունքում խորանալու է նաև սոցիալական անարդարությունն ու անհավասարությունը,

- Նախագծի ընդունմամբ փաստաբանական ծառայություններ մատուցող անձինք տեղափոխվում են ԱԱՀ դաշտ, ինչը իր հերթին ենթադրում է, որ հարկման ենթակա են լինելու փաստաբանների կողմից մատուցվող բոլոր, այդ թվում՝ անվճար ծառայությունները, սա իր հերթին հանգեցնելու է փաստաբանների կողմից անվճար ծառայություններ մատուցելուց հրաժարվելուն: Այսինքն՝ այսպիսով խոչընդոտ է

¹⁴ ՀՀ ազգային ժողովում Կ-839-03.05.2024-SZ-011/2 օրինագծի պատմությունը, http://parliament.am/draft_history.php?id=14959

ստեղծվում նաև ֆիզիկական անձանց անվճար իրավաբանական աջակցության տրամադրմանը:

Ընդգծվել է, որ «թեև հարկերի սահմանումն անհրաժեշտ է պետության գործունեության համար, սակայն պարտադիր է պահպանել այնպիսի հավասարակշռություն, որը չի խաթարում պետական և մասնավոր մարմինների գործունեության նպատակները: Իսկ փաստաբանները վճռորոշ դեր են խաղում արդարադատության պահպանման և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Չափազանց բարձր հարկերի սահմանումը վտանգելու է ոչ միայն իրավաբանական ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունը, այլ նաև արդարադատության և մարդու իրավունքների դերի նկատմամբ վերաբերմունքը հասարակության մեջ: ՀՀ-ում վերջին շրջանում տեղի ունեցող դատավարական օրենսդրության փոփոխությունները հանգեցրել են նրան, որ քաղաքացիների համար դատարան դիմելը, դատական գործընթացներին մասնակցելը՝ առանց փաստաբանի աջակցության, դարձել է գրեթե անհասանելի: Նման պայմաններում կարևոր է փաստաբանների կողմից մատուցվող ծառայությունների՝ ողջամիտ արժեքների պահպանումը՝ ապահովելու համար հասարակության բոլոր շերտերի համար հասանելի իրավաբանական ծառայություններ: Սա առավել կարևոր է դառնում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում Հանրային պաշտպանի գրասենյակը, որը քաղաքացիներին տրամադրում է անվճար իրավաբանական ծառայություններ, նախ՝ խիստ ծանրաբեռնված է, և հետո՝ ոչ բոլոր քաղաքացիներին է տրամադրում անվճար իրավաբանական օգնություն (գործում են կոնկրետ չափանիշներ, թե ովքեր կարող են դիմել վերջինիս): Նման պայմաններում Հանրային պաշտպանի ինստիտուտը կարևոր, բայց ոչ բավարար ռեսուրս է՝ քաղաքացիների իրավունքների պաշտպանության՝ պետության պարտականությունը կատարելու հարցում: Ուստի նշվածը անհրաժեշտ է բալանսավորել նաև այլ փաստաբանների կողմից Pro Bono ծառայությունների մատուցումը խրախուսելու, կամ փաստաբանների կողմից մատուցվող ծառայությունների ողջամիտ արժեքները պահպանելու միջոցով, ինչը անհնարին է դառնում վերջիններիս ընդհանուր հարկային համակարգ տեղափոխելու և հարկային բեռը անհամեմատ բարձրացնելու դեպքում»¹⁵:

¹⁵ Կարծիք-առաջարկ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <https://prwb.am/wp-content/uploads/2024/11/%D4%BF%D5%A1%D6%80%D5%AE%D5%AB%D6%84-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%A1%D6%80%D5%AF.pdf>

Սակայն քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված բոլոր առաջարկները և դիտարկումները մնացել են անպատասխան: 28.06.2024թ.-ին Հանրապետության նախագահին ստորագրեց օրենքը:

2. Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների սահմանադրաիրավական խնդիրը.

Արդար դատաքննության իրավունքը երաշխավորված է ինչպես ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով (օրինակ՝ *Airey v. Ireland*, (դիմում թիվ 6289/73))¹⁶ արձանագրել է, որ պետությունը պետք է ոչ միայն ֆորմալ առումով ապահովել դատարան դիմելու իրավունքը, այլև ստեղծել այնպիսի պայմաններ, որ այդ իրավունքը լինի գործնական և արդյունավետ: Փաստաբանական ծառայությունների հարկային բեռի այնպիսի ավելացումը, որը բերում է ծառայությունների անմատչելիության, կարող է բարձրացնել ՄԻԵԿ 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքի հետ համատեղելիության հարց: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ իրավաբանական օգնության հասանելիությունը էական է արդար դատավարություն ապահովելու համար, հատկապես այն հարցերում, որոնք շոշափում են հիմնարար իրավունքը (տե՛ս, օրինակ՝ *McVicar v. United Kingdom* (2002)¹⁷, *Gnahoré v. France* (2000)¹⁸):

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը (հոդված 61): Բացի այդ, երաշխավորվում է իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, իսկ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը (հոդված 64):

Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանվում է, որ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և

¹⁶ Էյրին ընդդեմ Իռլանդիայի (*Airey v. Ireland*), զանգատ թիվ 6289/73, 9 հոկտեմբերի 1979թ., [http://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-57420%22\]}](http://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57420%22]})

¹⁷ ՄակՎիկարն ընդդեմ Միացյալ Թագավորության (*McVicar v. the United Kingdom*), զանգատ թիվ 46311/99, 7 մայիսի 2002թ., [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-5863%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-5863%22]})

¹⁸ Գնահորեն ընդդեմ Ֆրանսիայի (*Gnahoré v. France*), զանգատ թիվ 40031/98, 19 սեպտեմբերի 2000թ., <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58802>

անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Իսկ մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս պետք է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Ընդ որում՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները (հոդված 81):

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը:

Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը համարվում է սահմանադրական իրավունք: Այս համատեքստում անհրաժեշտ է հայեցակարգային գուգահեռներ անցկացնել պետության սոցիալական պարտականությունների և հիմնական իրավունքների ապահովման պոզիտիվ պարտավորությունների միջև: Յուրաքանչյուր անձի՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը իր իրավական բնույթով և ուժով հանդիսանում է անմիջականորեն գործող հիմնական իրավունք (ամրագրված Սահմանադրության 2-րդ գլխում): Այն իր կառուցակարգային նշանակությամբ սերտորեն համադրելի է Սահմանադրության 85-րդ հոդվածով երաշխավորված առողջության պահպանության և անվճար բժշկական օգնության իրավունքի հետ: Ինչպես առողջապահության ոլորտում պետությունը չի կարող սահմանել այնպիսի ֆինանսական արգելքներ, որոնք խաթարում են բժշկական ծառայությունների հանրային հասանելիությունը և վտանգում մարդու կյանքն ու առողջությունը, այնպես էլ իրավական պաշտպանության ոլորտում ցանկացած կարգավորում պետք է միտված լինի ծառայությունների ֆինանսական մատչելիության պահպանմանը: Ուստի, Հարկային օրենսգրքով իրավաբանական օգնություն տրամադրող անձանց համար հարկային պարտավորությունների չափի անհամեմատ մեծացումը և հարկման ընդհանուր համակարգ (ԱԱՀ և շահութահարկ) տեղափոխելը ուղղակիորեն բխվում է ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի երաշխավորման ընթացակարգային

հիմքերին: Փաստաբանական ծառայությունների գների մեխանիկական բարձրացումը՝ առանց պետության կողմից փոխհատուցող կամ մեղմող ֆինանսական-կազմակերպչական մեխանիզմների ներդրման, փաստացի նշանակում է, որ պետությունը ոչ թե պայմաններ է ստեղծում իրավունքի արդյունավետ իրացման համար, այլ իր իսկ հարկային քաղաքականությամբ վերացնում է նախկինում գործող հասանելիության հնարավորությունները: Ուստի Հարկային օրենսգրքով իրավաբանական օգնություն տրամադրող անձանց համար հարկային պարտավորությունների չափի անհամեմատ մեծացումը և այլ հարկման համակարգ տեղափոխելը մեծ ռիսկեր կարող է առաջացնել նաև ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի երաշխավորման տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ Մարդու իրավունքների պաշտպանն (ՄԻՊ) ունի օրենքի սահմանադրականությունը որոշելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելու լծակ՝ ՀՀ Փաստաբանների պալատը և հասարակական կազմակերպությունները նշված հարցով դիմել են Մարդու իրավունքների պաշտպանին՝ խնդրելով իրացնել այդ լիազորությունը:

2024 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով «(...) ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի հունիսի 12-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքի (սույն դիմումի համատեքստում՝ նաև Օրենք) 9-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ, 64-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին հակասող այնքանով, որքանով վիճարկվող դրույթով փաստաբանական ծառայություն մատուցողներն այլևս չեն համարվելու շրջանառության հարկ վճարողներ և հարկ են վճարելու հարկային ընդհանուր ռեժիմով՝ վճարելով ավելացված արժեքի հարկ և շահութահարկ»¹⁹:

ՄԻՊ-ը ՄԴ դիմումում նշել է, որ իրեն հասցեագրված դիմումով ՀՀ փաստաբանների պալատը, ինչպես նաև մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ²⁰ մտահոգություններ են հայտնել Օրենքով նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ և խնդրել են դիմել Սահմանադրական դատարան:

¹⁹ ՀՀ Սահմանադրական դատարանի 19 նոյեմբերի 2024 թվականի ՄԴԱՌ-177 աշխատակարգային որոշումը՝ «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին, https://www.concourt.am/decision/decisions/674089a6cb414_sdav-177.pdf

²⁰ Կարծիք-առաջարկ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, <https://prwb.am/wp-content/uploads/2024/11/%D4%BF%D5%A1%D6%80%D5%AE%D5%AB%D6%84-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%A1%D6%80%D5%AF.pdf>

Ներկայացնելով ՀՀ փաստաբանների պալատի և հիշյալ հասարակական կազմակերպությունների մտահոգությունները, ինչպես նաև փաստաբանական գործունեության հարկման կտրուկ փոփոխությունը՝ ՄԻՊ-ը պնդել է, որ Նախագծի հիմնավորումներում բացահայտված չէ այն հարցը, թե արդյոք բացի նախագծային փոփոխությունների հիմքում ընկած հանգամանքների անհրաժեշտությունից, նախագծային լուծումների ընտրության շրջանակներում դիտարկվել են նախագծային կարգավորումների նախատեսման արդյունքում դրանց հավանական ազդեցությունը մարդու իրավունքների երաշխավորման համատեքստում:

ՀՀ սահմանադրական դատարանը 19 նոյեմբերի 2024 թվականի ՄԴԱՌ-1 որոշմամբ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի առնչությամբ գործի քննությունը մերժել է այն հիմնավորմամբ, որ Դիմողը ներկայացրել է իր դիրքորոշումները միայն սույն Օրենքի նախագծի անհիմն լինելու, Նախագծի առնչությամբ հանրային քննարկումների կարևորության և մասնագիտական համայնքի հետ քննարկումների անհրաժեշտության վերաբերյալ, ինչպես նաև այս կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան կարծիք ներկայացնելու մասին: «... Դիմողը փորձել է հիմնավորել սույն խնդրո առարկա Օրենքի նախագծի անհիմն լինելու վերաբերյալ դիրքորոշումը, որն իր բովանդակությամբ դեռևս չի հիմնավորում վիճարկվող դրույթի հակասահմանադրականությունը»²¹:

Այնուհետև՝ 2025 թվականի հունվարի 22-ին, նույն օրենքի առնչությամբ Սահմանադրական դատարան է դիմել նաև ՀՀ ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդը²²:

Մասնավորապես, պատգամավորները խնդրել են. «(...) որոշել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 61-րդ, 64-րդ, 67-րդ, 78-րդ, 81-րդ հոդվածներին, իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի հունիսի 12-ին երկրորդ ընթերցմամբ ընդունված՝

²¹ ՀՀ Սահմանադրական դատարանի 19 նոյեմբերի 2024 թվականի ՄԴԱՌ-177 աշխատակարգային որոշումը, https://www.concourt.am/decision/decisions/674089a6cb414_sdav-177.pdf

²² ՀՀ Սահմանադրական դատարանի 10 հունիսի 2025 թվականի ՄԴԱՌ-9 աշխատակարգային որոշումը՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և 12.06.2024թ. ընդունված՝ փաստաբանական ծառայություն մատուցողների հարկման ռեժիմի վերանայման մասով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին, https://www.concourt.am/decision/decisions/684bddc508f33_sdav-94.pdf

փաստաբանական ծառայություն մատուցողների հարկման ռեժիմի վերանայման մասով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխանության հարցը: Դիմումում, ի թիվս այլ փաստարկների նշվել է, որ պետությունն իր կանոնակարգումներով չպետք է ուղղակի կամ անուղղակի սահմանափակումներ նախատեսի իրավապաշտպան գործունեության համար՝ հաշվի առնելով տվյալ ոլորտի առանձնահատկությունն ու դերը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման գործում՝ պնդելով, որ նշվածն անմիջականորեն փոխկապակցված է փաստաբանական գործունեության՝ Սահմանադրությամբ նախատեսված՝ անկախության և ինքնակառավարման երաշխիքների հետ, իսկ հարկային քաղաքականության էական խստացումը ենթադրում է անուղղակի միջամտություն նշված՝ անկախության և ինքնակառավարման սկզբունքներին: Ավելին՝ այն պարզապես հավասարեցնում է փաստաբանական գործունեությունը ձեռնարկատիրական գործունեության հետ, տվյալ պարագայում հաշվի չի առնվում նաև այն, որ ա) մյուս բոլոր համադրվող ոլորտների ֆինանսական գոյացումները համադրելի չեն իրենց ծավալներով փաստաբանական գործունեության ֆինանսական գոյացումների հետ, բ) իրավապաշտպան գործունեության բնույթը ենթադրում է նաև որոշակի խումբ գործերով կամավոր անհատույց (Pro Bono) հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրումը, որն ի դեպ ՀՀ-ում խրախուսելու համար մոտ մեկուկես տարի առաջ նույն օրենսդրի կողմից մշակվել և ընդունվել էր հատուկ թիվ ՀՕ-366-Ն օրենքը: Փոփոխությունները կհանգեցնեն կամավոր անհատույց հիմունքներով իրավաբանական օգնություն տրամադրելուց հրաժարվելուն: քանի որ այդպիսի օգնությունը ևս ենթակա է լինելու հարկման:

ՀՀ սահմանադրական դատարանը թեև վարույթ էր ընդունել, սակայն 10 հունիսի 2025 թվականի ՄԴԱՌ-9 որոշմամբ կարճել է սույն գործի վարույթը՝ գտնելով, որ դիմումում պատշաճ կերպով հիմնավորված չէ բարձրացված հարցերի՝ սահմանադրաիրավական վեճի բովանդակություն ունենալու հանգամանքը (ի թիվս այլնի, հաշվի առնելով նաև վերաբերելի օրենսդրական փոփոխությունները), հետևաբար՝ Դիմողի կողմից առաջադրված հարցերը Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա չեն:

Ըստ Սահմանադրական դատարանի՝ հաշվի առնելով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի կարևորությունը և նշանակությունը հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության, մասնավորապես՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի հարցում՝ սահմանադիրը Սահմանադրության

64-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրել է օրենքով սահմանված դեպքերում պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ցույց տալու վերաբերյալ կարգավորումը:

Ըստ Սահմանադրական դատարանի՝ պետությունը, հաշվի առնելով նաև, որ իրավաբանական օգնությունը տրամադրվում է կամավոր և անվճար հիմունքներով, պետք է խրախուսի հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրումը: Անդրադառնալով Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի ուժով՝ փաստաբանական ծառայություն մատուցողներին հարկման հատուկ համակարգից (շրջանառության հարկ վճարողներ) հարկման ընդհանուր համակարգ տեղափոխելու հետևանքով հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից որոշակի խումբ անձանց գործերով կամավոր անհատույց (Pro Bono) հիմունքներով իրավաբանական օգնություն տրամադրելու անհրաժեշտ կառուցակարգերի առկայության/բացակայության հարցին՝ Սահմանադրական դատարանը փաստել է, որ սույն դիմումը Սահմանադրական դատարան մուտքագրելուց հետո Ազգային Ժողովի կողմից 2025 թվականի մարտի 26-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-72-Ն օրենքը, որի 1-ին հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով. «Սույն մասի դրույթները փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության) հարկման բազայի նկատմամբ չեն կիրառվում, եթե այդ ծառայությունների՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չի գերազանցում ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը: Փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության)՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասի դրույթները կիրառվում են այդ չափը գերազանցող մասի նկատմամբ:»:

Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բացառությունները սահմանող օրենքին տրվել է հետադարձ ուժ՝ 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա տարածելով, Սահմանադրական դատարանը գտել է, որ 2025 թվականի մարտի 26-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-72-Ն օրենքով ամրագրված վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում՝ բարձրացված առաջին հարցադրման (Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի ենթադրյալ հակասահմանադրականության մասով) առնչությամբ ենթադրյալ սահմանադրաիրավական բովանդակություն ունեցող վեճը, ըստ էության, սպառվել է²³:

Թեև Սահմանադրական դատարանը ձևական-իրավական առումով վեճը համարեց սպառված, սակայն մասնագիտական համայնքի համար մի շարք հարցեր մնում են բաց, այդ թվում՝ արդյո՞ք 5 տոկոսը բավարար է խրախուսելու Pro Bono գործունեությունը, թե՞ այն սահմանափակող բնույթ ունի: Սահմանադրական դատարանն ըստ էության չանդրադարձավ այն հարցին, թե ինչպես է ընդհանուր հարկային բեռի բարձրացումը (ԱԱՀ) ազդում վճարովի ծառայություններից օգտվող միջին վիճակագրական քաղաքացու վրա:

Սահմանադրական դատարանի որոշումները ցույց տվեցին, որ դատարանը հակված է պետության հարկային հայեցողությունը գերակա համարել, քանի դեռ առկա են «նվազագույն» կառուցակարգեր (օրինակ՝ 5% արտոնությունը): Այնուամենայնիվ, վիճարկվող կարգավորումների սահմանադրականության հարցը շարունակում է մնալ իրավական բանավեճերի կենտրոնում, քանի որ հարկային բեռի ծանրացումը կարող է փաստացի ստեղծել արգելքներ դատական պաշտպանության իրավունքի իրացման ճանապարհին:

Հաշվի առնելով փաստաբանական համայնքի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների շարունակական մտահոգությունները և Սահմանադրական դատարան ներկայացված դիմումները՝ Հարկային օրենսգրքում խնդրին վերաբերելի փոփոխությունը կատարվեց 26.03.2025թ.-ին (ՄԴ-ում քննվող վարույթի ընթացքում, մինչև 10 հունիսի 2025 թվականի ՄԴԱՌ-9 որոշման կայացումը):

Այդուհանդերձ, հարկ է ընդգծել, որ 2025 թվականի մարտի 26-ին ընդունված ՀՕ-72-Ն օրենքը միայն անվճար իրավաբանական ծառայությունների մասով 5% շեմով բացառություն սահմանող փոփոխություն չէր: Նույն օրենքով Հարկային օրենսգրքի 254-րդ

²³ ՀՀ Սահմանադրական դատարանի 10 հունիսի 2025 թվականի ՄԴԱՌ-9 աշխատակարգային որոշումը, https://www.concourt.am/decision/decisions/684bddc508f33_sdav-94.pdf

հողվածի 3-րդ մասը լրացվեց 3.1-ին կետով, որի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել Հայաստանի Հանրապետությունում կիրառվող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի «Մ. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» բաժնում ներառվող «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն» իրականացնողները: Այսինքն՝ նշված փոփոխությամբ շրջանառության հարկի համակարգից դուրս մնալու կարգավորումը տարածվեց ոչ միայն փաստաբանական ծառայություն մատուցողների, այլև ավելի լայն՝ իրավաբանական և հաշվապահական գործունեություն իրականացնող սուբյեկտների վրա:

Նույն օրենքով սահմանվեց, որ փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության) հարկման բազայի նկատմամբ չեն կիրառվում, եթե այդ ծառայությունների՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չի գերազանցում ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը: Փաստաբանական գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով մատուցվող անվճար իրավաբանական ծառայությունների (կամավոր անհատույց իրավաբանական օգնության)՝ սույն մասով սահմանված կարգով որոշված ԱԱՀ-ով հարկման բազան ԱԱՀ վճարողների՝ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող բոլոր գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազայի 5 տոկոսը գերազանցելու դեպքում սույն մասի դրույթները կիրառվում են այդ չափը գերազանցող մասի նկատմամբ²⁴:

Պետք է նշել, որ նշված բացառությունը տարածվում է միայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի իմաստով կամավոր անհատույց իրավաբանական օգնության վրա, այսինքն՝ կիրառելի է հանրային պաշտպանին դիմելու իրավունք ունեցող անձանց նկատմամբ, այլ ոչ թե ցանկացած այլ անվճար իրավաբանական աջակցության կարիք ունեցող անձի, որին փաստաբանը ինչ-ինչ հիմքով պատրաստակամ կլինի տրամադրել օգնություն:

Այսպիսով, 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները հանգեցրին փաստաբանական գործունեության հարկային ռեժիմի

²⁴ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-72-Ն օրենքը, ընդունված է 2025 թվականի մարտի 26-ին, ուժի մեջ է մտել 08.04.2025թ., <https://www.arlis.am/hy/acts/205201/latest>

կտրուկ փոփոխության: Հարկային փոփոխությունների արդյունքում փաստաբանական գործունեությունը հարկման տեսանկյունից մոտեցվեց սովորական ձեռնարկատիրական գործունեության ընդհանուր ռեժիմին՝ առանց բավարար չափով հաշվի առնելու դրա իրավապաշտպան բնույթը և արդարադատության մատչելիության հետ անմիջական կապը: Թեև իշխանությունը որոշակի զիջում կատարեց անվճար ծառայությունների 5% շեմի մասով, ընդհանուր հարկային բեռի աճը մնում է աննախադեպ, ինչը լուրջ մարտահրավեր է արդարադատության մատչելիության համար, իսկ 5% բացառության կիրառման մեխանիզմը՝ խնդրահարույց:

Նշված փոփոխություններին և դրանց ազդեցությանը՝ փաստաբանական գործունեության, հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության, անվճար գործեր վարելու՝ փաստաբանների հնարավորությունների և ընդհանրապես՝ արդարադատության մատչելիության որակի վրա կանդրադառնանք հաջորդ գլուխներում:

3. Հարկային նոր քաղաքականության կիրառման արդյունքները. պրակտիկ խնդիրներ.

Սույն գլխում վերլուծվում են 2024-2025թթ ընթացքում իրավաբանական ծառայությունների ոլորտում տեղի ունեցած քանակական և որակական փոփոխությունները՝ հիմնված պաշտոնական վիճակագրության և փորձագիտական հարցազրույցների վրա:

3.1. Շուկայի կառուցվածքային փոփոխությունները և տնտեսավարողների դինամիկան.

Հետազոտության շրջանակներում ՀՀ վիճակագրական կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ ՏԳՏԴ 69.10.0 («Իրավաբանական գործունեություն») ենթադասով բիզնես ռեզիստի ամփոփ տվյալներով գրանցված տնտեսավարողների (իրավաբանական անձինք և ԱԶ) ընդհանուր պատկերը հետևյալն է²⁵՝

- 01.01.2024թ. դրությամբ՝ 483 իրավաբանական անձ (457 ՍՊԸ, 26 ՓԲԸ), 715 ԱԶ, ընդհանուր՝ 1198:


- 01.12.2024թ. դրությամբ՝ 542 իրավաբանական անձ (514 ՍՊԸ, 28 ՓԲԸ), 800 ԱԶ, ընդհանուր՝ 1342:

- 01.01.2025թ. դրությամբ՝ 517 իրավաբանական անձ (517 ՍՊԸ, 0 ՓԲԸ), 802 ԱԶ, ընդհանուր՝ 1319²⁶:

Դիագրամ 1՝ ՏԳՏԴ 69.10.0 «Իրավաբանական գործունեություն» ենթադասով գրանցված տնտեսավարող սուբյեկտների քանակը՝ ըստ կազմակերպչաիրավական ձևի, 2024 թվականի հունվարի 1-ի, 2024 թվականի դեկտեմբերի 1-ի և 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ.

²⁵ Այս տվյալների վերլուծության համատեքստում պետք է հաշվի առնել, որ 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-72-Ն օրենքով Հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է 3.1-ին կետով, որի արդյունքում շրջանառության հարկի համակարգից դուրս են մնացել ոչ միայն փաստաբանական ծառայություն մատուցողները, այլև ՏԳՏԴ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն» դասում ներառվող գործունեություն իրականացնողները: Հետևաբար, ՊԵԿ և վիճակագրական տվյալների օգտագործման ժամանակ «իրավաբանական գործունեություն» դասը դիտարկվում է որպես հարկային և վիճակագրական հաշվառման կատեգորիա:

²⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍՏ) 25.11.2025թ. գրությունը՝ ի պատասխան Կազմակերպության հարցման:



Իսկ իրավաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարող կազմակերպությունների (իրավաբանական անձինք և ԱԶ) քանակի վերաբերյալ տվյալների վերլուծությունը հանգում է հետևյալին.

- 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16 անհատ ձեռնարկատեր և 75 Իրավաբանական անձ²⁷:

- 2025թ. մարտի 31-ի դրությամբ՝ 592 անհատ ձեռնարկատեր և 537 իրավաբանական անձ²⁸:

Ընդ որում՝ 2025թ. հունվար-մարտ ամիսներին գործունեությունը դադարեցնելու դիմում է ներկայացրել 57 ԱԶ:


Ինչպես տեսնում ենք, Օրենքի ուժի մեջ մտնելու դրությամբ՝ 517 գրանցված իրավաբանական անձանցից միայն 75-ն (14,5%) էր ԱԱՀ վճարող, այսինքն՝ մնացյալ 85,5%-ի վրա այս կամ այն կերպ ազդել է հարկային ռեժիմի փոփոխությունը:

Իրավաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարող կազմակերպությունների (ոչ անհատ ձեռնարկատեր) ըստ մարզերի և Երևան համայնքի բաշխվածությունը ունի հետևյալ տեսքը՝


²⁷ Հավելված 1՝ ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալները՝ 2023, 2024, 2025թ. (սեպտեմբեր ամիսների վերաբերյալ) ԱԱՀ մուտքերի, իրավաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարող կազմակերպությունների վերաբերյալ:

²⁸ Հավելված 2՝ ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալները՝ 2025թ. ԱԱՀ մուտքերի, իրավաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարող կազմակերպությունների վերաբերյալ:

Դիագրամ 2՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում ԱԱՀ վճարող իրավաբանական անձանց տարածքային բաշխվածությունը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի և 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ.



Դիագրամ 3՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում ԱԱՀ վճարող իրավաբանական անձանց քանակի փոփոխությունը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի և 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ.



Աղյուսակ 1՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում ԱԱՀ վճարող իրավաբանական անձանց քանակը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի, 2024 թվականի դեկտեմբերի 31-ի և 2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ.

 2023 դեկտեմբերի 31-ի դրությամբ	Երևան և մարզեր										
	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
	Հարկման ռեժիմ										
ԱԱՀ վճարող	6	1	1	0	1	1	0	0	1	0	0

 2024 դեկտեմբերի 31-ի դրությամբ	Երևան և մարզեր										
	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
	Հարկման ռեժիմ										
ԱԱՀ վճարող	9	0	1	0	0	1	0	1	2	1	0

 2025 սեպտեմբերի 30-ի դրությամբ	Երևան և մարզեր										
	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
	Հարկման ռեժիմ										
ԱԱՀ վճարող	43	11	7	17	8	1	5	5	14	3	12

Ինչ վերաբերում է անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ ունեցող փաստաբանական ծառայություններ մատուցող անձանց՝ ըստ ՊԵԿ-ի կողմից փոխանցված տվյալների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրանցված է եղել ընդամենը 16 ԱԱՀ վճարող ԱԶ, որոնցից 10-ը՝ Երևանում գործունեություն ծավալող (ՏԳՏԴ դասակարգիչ՝ M69.10.0), իսկ շրջանառության հարկ վճարող՝ 827, որոնցից 522-ը՝ Երևանում գործունեություն ծավալող²⁹:

2025թ. հունվարի 1-ից հետո ԱԱՀ վճարողների և մինչև Օրենքի ուժի մեջ մտնելու պահը շրջանառության հարկով աշխատող ԱԶ-ների թվի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել մեծ ազդեցություն հարկային ռեժիմը ունեցել է մարզերի վրա:

Վիճակագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ «Իրավաբանական գործունեություն» իրականացնող անհատ ձեռնարկատերերից 14-ը 2023թ.-ի ընթացքում և 22-ը 2024թ.-ի ընթացքում ստացել են «լուծարված» կարգավիճակ: Իսկ Օրենքի ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների դրությամբ

²⁹ Հավելված 1:

իրավաբանական գործունեություն իրականացնող 171 անհատ ձեռնարկատեր **«ոչ գործող»** կարգավիճակ են ունեցել:³⁰

Այսինքն՝ նախորդ տարիների տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2024թ. վերջին և 2025թ. ընթացքում գործունեությունը ժամանակավորապես դադարեցրած կամ «ոչ գործող» կարգավիճակ ստացած ԱԶ-ների թիվը շեշտակի ավելացել է:

Թեև 2025 թ. ընթացքում ոլորտում գրանցվել է 75 նոր ԱԶ, գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու դիմում ներկայացրած ԱԶ-ների թիվը կազմել է 171: Սա փաստում է, որ շուկայում անհատական մակարդակով ինքնուրույն գործելու և ԱԱՀ վարչարարությանը դիմակայելու հնարավորությունը գործնականում դարձել է դժվար իրագործելի. յուրաքանչյուր 1 նոր գրանցվող անհատ փաստաբանի դիմաց շուկայից դուրս է եկել ավելի քան 2-ը:

2025 թվականի տարեվերջի դրությամբ ԱԱՀ դաշտում գործող սուբյեկտների կազմում իրավաբանական անձինք (795 սուբյեկտ) արդեն իսկ գերազանցում են ԱԶ-ներին (792 սուբյեկտ): Ավելին, միայն 2025 թվականի ընթացքում շուկայում գրանցվել է 187 նոր իրավաբանական անձ (ՄՊԸ/ՓԲԸ):

³⁰ Հավելված 1:

Աղյուսակ 2՝ «Իրավաբանական գործունեություն» իրականացնող անհատ ձեռնարկատերերի՝ «ոչ գործող» կարգավիճակ ստանալու դեպքերը՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի, 2024 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 2025 թվականի ապրիլ-դեկտեմբեր ժամանակահատվածներում



Հիմնականում գործունեությունը դադարեցրել են Երևանում գործող ԱԶ-ները: Փաստացի ստացվում է, որ Օրենքի ուժի մեջ մտնելու պահի դրությամբ գործող ԱԶ-ների (ըստ ՊԵԿ տվյալների՝ 827) 20.7 %-ը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այլևս գործունեություն չի ծավալում:

Հիմա դժվար է հստակ ասել, որովհետև չկա հստակ վիճակագրություն, բայց մի շարք ԱԶ-եր նախընտրում են մեծ փաստաբանական ընկերությունների հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքել ժամավճարով կամ գործարքային սկզբունքներով:

Փաստաբան

Սա փաստում է, որ անհատ փաստաբանների համար ԱԱՀ դաշտում ինքնուրույն գործելը դարձել է տնտեսապես անշահավետ կամ վարչարարական առումով անհնարին, ինչը իր հերթին բերել է շուկայի կենտրոնացմանը խոշոր գրասենյակներում:

Հարկերի բարձրացումից հետո նոր գործեր չունեի, նաև երկու կազմակերպությունում բավականին ծանրաբեռնվածություն ունեի, արդեն իմաստ չկար ԱԶ պահելու:

Փաստաբան

Միջին և ավելի ցածր խավի համար զգալի ազդեցություն է, որովհետև մարդիկ կարող էին օգտվել որակյալ իրավաբանական ծառայություններից, բայց հիմա ստիպված են կամ ինքնուրույն անել, կամ խորհուրդ հարցնել, կամ Pro Bono ծառայությունների դիմել և այլն:

Փաստաբան

Միաժամանակ, տվյալները ցույց են տալիս, որ 2025թ.-ի ընթացքում նույն դասիչով գրանցվել է 75 նոր ԱԶ³¹, ինչը վկայում է, որ ոլորտում կա նաև նոր մուտք գործողների հոսք: Սա կարող է ցույց տալ, որ նոր մասնագետները կամ ոլորտ մուտք գործող ծառայություն մատուցողները ստիպված են հարմարվել հարկման նոր իրողությանը (այդ թվում՝ ԱԱՀ դաշտում գործելու անհրաժեշտությանը):

Տվյալները փաստում են, որ ԱԱՀ վճարող իրավաբանական անձանց թիվը 2024թ. վերջի 75-ից 2025թ. հասել է 795-ի (շուրջ 10 անգամ ավելացել է):³²


ԱԱՀ վճարող կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը (795-ից 637-ը) կենտրոնացած է Երևանում: Մարզերում իրավաբանական անձանց թիվը մնում է ցածր (օրինակ՝ Վայոց Ձորում՝ ընդամենը 4, Գեղարքունիքում՝ 10):

Նկար 1՝ Հարկման ընդհանուր համակարգում գործող և ԱԱՀ վճարող տնտեսավարող սուբյեկտների տարածքային բաշխվածությունը՝ ըստ M69.10.0 «Իրավաբանական

³¹ Հավելված 2:

³² Հավելված 2:

գործունեություն» գործունեության տեսակի, 2025 թվականի վերջին վավեր հաշվարկների հիման վրա.



Միևնույն ժամանակ մարզային ԱԶ-ների կասեցումը (օրինակ՝ 2025 թվականի ընթացքում Արարատում՝ 9, Կոտայքում՝ 7) նշանակում է, որ մարզային բնակչության համար որակյալ մասնավոր փաստաբան գտնելը դառնում է ավելի դժվար և թանկ:

Մարզի փաստաբանները և Երևանի խոշոր փաստաբանական գրասենյակները, որոնք հսկա շրջանառություն ունեն, չպետք է նույն հարկային բեռը կրեն:

Մարզի եկամուտը ու Երևանի եկամուտը նույնը չեն, և քաղաքացիներն էլ նույնը չեն իրենց վճարունակության տեսանկյունից: Ու հատկապես քրեական գործերով տարբերությունն ահռելի է:

Փաստաբան

Ներկայումս Կապանում 3-4 փաստաբան արդեն նույն գործունեությունը չեն ծավալում, գործունեությունը փոխել են:

Իսկ Երևանում գործընկերներս մասնավոր փաստաբանությամբ չեն զբաղվում, ապահովագրական ընկերություններ են բացում կամ որևէ խոշոր կազմակերպություն մտնում, աշխատում:

Փաստաբան

Իմ կարծիքով՝ վճարունակության տեսանկյունից պետք էր հաշվի առնել նաև մարզերի բնակչության սոցիալական վիճակը:

Փաստաբան


Երբ մարզերի բնակիչներ դիմում են ինձ և ես ծառայության արժեք եմ ասում, որը չի ընդունվում, խորհուրդ եմ տալիս փաստաբան գտնել հենց մարզում: Ակնհայտ է, որ մարզերի կոլեգաները ավելի ցածր սակագներով են աշխատում, Երևանում գործող փաստաբանների պարագայում կա նաև ճանապարհածախս:

Փաստաբան

Հետազոտության շրջանակներում ՊԵԿ-ից ստացված 2025թ. ամբողջական տվյալները փաստում են իրավաբանական ծառայությունների շուկայի կտրուկ անցումների մասին: Եթե 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ոլորտում գործում էր ընդամենը 91 ԱԱՀ վճարող սուբյեկտ (16 ԱԶ և 75 իրավաբանական անձ), ապա 2025թ. վերջի դրությամբ նրանց

թիվը հասել է **1738**-ի:³³ Սա նշանակում է, որ ԱԱՀ վճարողների քանակը մեկ տարում աճել է **ավելի քան 19 անգամ**:

Դիագրամ 4՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում ԱԱՀ վճարող սուբյեկտների քանակի փոփոխությունը՝ 2023, 2024 և 2025 թվականների դրությամբ.



Հատկանշական է անցման դինամիկան. տնտեսավարողների **65%-ը** (1129 սուբյեկտ) հարկման ընդհանուր համակարգ է անցել հենց տարվա առաջին եռամսյակում, ինչը վկայում է օրենսդրական փոփոխության պարտադրված բնույթի մասին:³⁴

2023-2024թթ. միջև ընկած ժամանակահատվածում տեսնում ենք ԱԱՀ վճարողների քանակի չնչին և բնականոն աճ (56-ից 69 սուբյեկտ): Սա վկայում է այն մասին, որ մինչև օրենսդրական փոփոխությունները փաստաբանական գրասենյակների միայն շատ փոքր հատվածն էր հատում շրջանառության շեմը և դառնում ԱԱՀ վճարող: Շուկան կայուն էր և կանխատեսելի: 2025 թվականի պատկերը ցույց է տալիս կտրուկ և ոչ բնականոն աճ:

Այսպիսով, հարկային նոր քաղաքականությունը հանգեցրել է ոչ միայն ԱԱՀ վճարողների թվի մեխանիկական աճի, այլև իրավաբանական ծառայությունների շուկայի կառուցվածքային վերադասավորման: Անհատ փաստաբանների մի մասը դադարեցրել է ԱԶ գործունեությունը կամ անցել է այլ աշխատանքային մոդելների, իրավաբանական

³³ Հավելված 2:

³⁴ Հավելված 2:

անձանց և ԱԱՀ վճարողների թիվը կտրուկ աճել է, իսկ ծառայությունների տարածքային հասանելիության խնդիրը հատկապես սրվել է մարզերում:

3.2. Հարկային բեռի փաստացի պատկերը օրենսդրական փոփոխություններից հետո և ծառայությունների գնաճը.


3.2.1. Հարկային բեռի ավելացում.

Հետազոտության շրջանակներում ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալները փաստում են իրավաբանական ծառայությունների ոլորտում (ՏԳՏԴ դասակարգիչ՝ M69.10.0) հարկային մուտքերի և հարկման ռեժիմների կտրուկ աճի մասին:

Իրավաբանական ծառայությունների մասով բոլոր տեսակի կազմակերպչաիրավական ձև ունեցողներից հավաքագրված ԱԱՀ-ի ծավալները ցույց են տալիս պետական բյուջեի մուտքերի էական աճ, ինչը ուղղակիորեն պայմանավորված է 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով:

Տվյալների համադրումը ցույց է տալիս, որ մինչև օրենսդրական փոփոխությունները (2023-2024թթ.) ԱԱՀ-ի մուտքերը կայուն են եղել, սակայն 2025 թվականի ավարտին ԱԱՀ մուտքերը 2024 թվականի համեմատ աճել են շուրջ 187%-ով՝ գրեթե 2.9 անգամ:

Դիագրամ 5՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում հավաքագրված ԱԱՀ մուտքերի դինամիկան՝ 2023-2025 թվականների ընթացքում.




Մասնավորապես 2023թ. ընթացքում իրավաբանական ծառայությունների ոլորտից հավաքագրված ԱԱՀ-ն կազմել է շուրջ **1,169,823,848** ՀՀ դրամ (որից՝ Երևան՝ 1,161,295,830 դրամ (99.3%)), բոլոր մարզերը միասին՝ 8,528,018 դրամ (0.7%)):

→ 2024թ. այս ցուցանիշը նվազել է՝ կազմելով **1,128,724,150 ՀՀ դրամ** (որից՝ Երևան՝ 1,126,051,356 դրամ (99.8%), բոլոր մարզերը միասին՝ 2,672,794 դրամ (0.2%)):³⁵

→ 2025թ. ավարտին այս ԱԱՀ մուտքերը կազմել են **3,239,481,204 ՀՀ դրամ** (որից՝ Երևան՝ 2,649,792,322 դրամ (81.8%), բոլոր մարզերը միասին՝ 589,688,882 դրամ (18.2%)):³⁶

Դիագրամ 6՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում 2025 թվականի ընթացքում հավաքագրված ԱԱՀ մուտքերի հարաբերակցությունը՝ Երևան քաղաքի և մարզերի միջև.



Նշված տվյալները ցույց են տալիս նաև, որ 2025 թվականին իրավաբանական ծառայություններից հավաքագրված ԱԱՀ-ի մոտ չորս հինգերորդը կենտրոնացած է Երևանում, իսկ մարզերը միասին ապահովում են ընդամենը մոտ մեկ հինգերորդը: Մինևս ժամանակ արձանագրվել է մարզերում հավաքագրված ԱԱՀ-ի մեծ աճ: Նշվածը վկայում է այն մասին, որ հարկային ռեժիմի փոփոխությունը առավել մեծ ազդեցություն է ունեցել մարզերում գործունեություն ծավալող փաստաբանների և, որպես հետևանք, բնակչության համար:

Համեմատության համար ներկայացնում ենք հարկային մուտքերը ըստ մարզերի և Երևանի՝ մինչև հարկային ռեժիմի փոփոխությունը և դրանից հետո:

³⁵ Հավելված 1:

³⁶ Հավելված 2:

**Աղյուսակ 3՝ Իրավաբանական ծառայությունների ոլորտում հավաքագրված ԱԱՀ մուտքերը՝
ըստ Երևան քաղաքի և մարզերի, 2023-2025 թվականների ընթացքում.**

Մարզ	2023 / ՀՀ դրամ	2024 / ՀՀ դրամ	2025 / ՀՀ դրամ
 ՏԱՎՈՒՇ	8,261	1,591,955	40,724,390
 ԼՈՌԻ	5,637,589	6,231,619	174,936,560
 ԱՐԱՐԱՏ	159,455	350,167	45,662,684
 ԿՈՏԱՅՔ	1,326,943	1,326,955	92,122,607
 ՍՅՈՒՆԻՔ	102 520	0	51,298,533
 ՇԻՐԱԿ	47,820	98,959	52,671,579
 ՎԱՅՈՑ ՁՈՐ	345,898	390,731	15,074,225
 ԱՐՄԱՎԻՐ	972,652	1,021,571	55,650,408
 ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	0	0	27,218,551
 ԱՐԱԳԱԾՈՏՆ	29,400	58,800	34,329,345
 ԵՐԵՎԱՆ	1,161,295,830	1,126,051,356	2,649,792,322

Հատկանշական է, որ 2023 և 2024 թվականների, ինչպես նաև 2025 թվականի հունվար ամսվա ընթացքում որևէ ԱԱՀ մուտք հաշվառված չի եղել Գեղարքունիքի մարզում, որը 2025 թվականի ավարտին դարձել է 27,218,551 ՀՀ դրամ:

Օրինակ՝ Արագածոտնի մարզում 2023 և 2024 թվականների, ինչպես նաև 2025 թվականի հունվար ամսի կտրվածքով հաշվառված է եղել ԱԱՀ մուտք միայն 2023 թվականի հուլիս ամսին՝ 29,400 ՀՀ դրամի չափով, որը 2025 թվականի ընթացքում դարձել է 34,329,345 ՀՀ դրամ:

2023 և 2024 թվականների, ինչպես նաև 2025 թվականի հունվար ամսվա ընթացքում որևէ ԱԱՀ մուտք հաշվառված չի եղել Սյունիքի մարզում, որը, 2025 թվականի ավարտին դարձել է 51,298,533 ՀՀ դրամ:

Ընդհանուր առմամբ 2025 թվականի ընթացքում 2025թ-ի համար վերջին վավեր հաշվարկներով M69.10.0 (Իրավաբանական գործունեություն) գործունեության տեսակ հայտարարագրած տնտեսվարող սուբյեկտների կողմից պետական բյուջե է վճարվել

3,239,481,204 ՀՀ դրամ՝ որպես ԱԱՀ:³⁷ Այսինքն՝ 2024 թվականի համեմատ ԱԱՀ մուտքերը աճել են շուրջ 187%-ով, այսինքն՝ գրեթե 2.9 անգամ:

ՊԵԿ-ի տվյալների հաշվարկը ցույց է տալիս հարկային մուտքերի խիստ կենտրոնացվածությունը մայրաքաղաքում: Տարածքային նման կենտրոնացումը վկայում է իրավաբանական ծառայությունների շուկայի կառուցվածքային անհամաչափության մասին: Մարզերում ծառայությունների սահմանափակ ներկայացվածությունը նշանակում է, որ հարկային բեռի աճը հատկապես ծանր է ընկնում տեղական փոքր սուբյեկտների վրա՝ խթանելով նրանց դուրսմղումը շուկայից:


Վիճակագրական տվյալները հաստատում են, որ հարկային ռեժիմի փոփոխությունը հանգեցրել է ոլորտի հարկային բեռի շեշտակի աճի և կառուցվածքային լուրջ վերափոխումների:

Առցանց իրականացված հարցման տվյալներով՝ հարցված փաստաբանների կեսից ավելին արձանագրել է ծառայությունների արժեքի 30-ից ավել տոկոսով աճ: Հարցվածների մի մասն էլ արձանագրել է, որ փաստաբանական ծառայությունների արժեքը բարձրացել է մինչև 30 տոկոսի չափով: Հատկանշական է, որ կորպորատիվ հաճախորդների դեպքում ԱԱՀ-ի փոխհատուցման մեխանիզմը մեղմում է ազդեցությունը, սակայն ֆիզիկական անձանց համար ծառայությունը թանկացել է ուղիղ հարկային բեռի չափով:

Դիագրամ 7՝ Փաստաբանական ծառայությունների արժեքի փոփոխությունը հարկային բեռի ավելացումից հետո՝ առցանց հարցմանը մասնակցած փաստաբանների պատասխանների հիման վրա.

³⁷ Հավելված 2:

2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային փոփոխությունները (անցումը շրջանառության հարկից Ավելացված արժեքի հարկին) որքանով են ազդել Ձեր/Ձեր ընկերության կողմից pro bono ծառայությունների մատուցման ծավալի վրա:



Ծառայությունների մատուցման արժեքի բարձրացում է տեղի ունեցել: Ունեցել ենք դեպք, որը իմ հետաքրքրության շրջանակում է, օրինակ՝ զինծառայողների հետ կապված, և փորձել եմ ցածր արժեք ասել, սակայն նույնիսկ այդ դեպքում մարդիկ չեն համաձայնվում:

Փաստաբան

Իսկ հարցազրույցներին մասնակցած փաստաբանների պնդմամբ՝ ԱԱՀ-ի և շահութահարկի ներդրումը հանգեցրել է ծառայությունների գների **30-50% աճի**:

Ծառայությունների մատուցման գինը բարձրացել է՝ վարչական գործերը մինիմում 30 տոկոսով, իսկ քաղաքացիական գործերը 40-50 տոկոսով: Հանուն արդարության նշեմ, որ գնի ավելացումը պայմանավորված է ոչ միայն հարկային բեռի ավելացմամբ, այլև դատավարական պրոցեսների երկարացմամբ: Այսինքն՝ մոտ 5-6 տարի ընթացող պրոցեսների համար ես գումար վերցնում:

Փաստաբան

Մեր մշտական հաճախորդների դեպքում անհատապես բոլորի հետ բանակցել ենք, օրինակ՝ եղել է դեպք, որ ոչ թե ծառայության արժեքն ենք փորձել ավելացնել, այլ ԱԱՀ-ն: Օրինակ՝ պայմանական արժեքը 100 հազար դրամ արժեր, դարձրել ենք 120 հազար, բայց քանի որ մենք նաև շահութահարկ ենք վճարելու մեր ծառայության գինը նվազել է: Ամեն դեպքում նոր հաճախորդների համար փորձել ենք կտրուկ փոփոխություններ չանել, որովհետև շուկան, ոլորտը ենթադրում է իրավապաշտպան գործառույթ, և փորձելու ենք մեր քաղաքականությամբ մեկ տարի աշխատել ծայրահեղ ավելացումներով և հետագայում վերանայել մեր գործունեությունը: Չեմ բացառում, որ շատերը գնացել են ծառայությունների մի մասը ուղղակի ցույց չտալու քաղաքականությամբ:

Փաստաբան

3.2.2. Ծախսագրման և ԱԱՀ հաշվանցման սահմանափակ հնարավորությունները.

Փորձագետները նշում են, որ խնդիրը միայն 20% ԱԱՀ-ն չէ, այլև ծախսագրման մեխանիզմների բացակայությունը: Իրավաբանական ծառայությունների ոլորտում նյութական ծախսերի (որոնք թույլ կտային հաշվանցել կամ նվազեցնել վճարման ենթակա հարկերը) տեսակարար կշիռը սովորաբար ցածր է, իսկ հիմնական ծախսերը կապված են աշխատավարձի, մասնագիտական զարգացման, վարձակալության, տեխնիկական գործիքների և կազմակերպական ծախսերի հետ: Հաճախակի հիմնական ծախսերը կա՛մ չեն հաշվանցվում, կա՛մ ունեն խիստ սահմանափակ շեմեր:

Բնչի համար է շահութահարկի տեսանկյունից շատ մեծ լինելու ավելացումը, որովհետև խորհրդատվական ծառայություններ մատուցողները չունեն նյութածախս: Մեր միակ ծախսագրումը դա աշխատավարձն է և տարածքի վարձակալությունը, մենք ավելի շատ քան արտադրություն անող ընկերությունները ունենք գովազդի անհրաժեշտություն, թիմի առաջխաղացման համար կատարվող ներդրումների, թիմի մասնագիտական որակի բարձրացման համար ներդրումների կարիք, բայց դրանց բոլորով հարկային օրենսգիրքը ունի շատ փոքր տոկոսային շեմեր, և կատարված ծախսերը կրկին չեն ծախսագրվելու: Այսինքն, այստեղ էլ չունեն տարբերակված մոտեցում կամ արտոնություն:

Օրինակ՝ գրասենյակում կան իրավաբաններ, ովքեր մասնագիտական աճի համար պետք է դառնան փաստաբաններ և գրասենյակը կարող է իր վրա վերցնել այդ ծախսերը և հեռանկարային ներդրում անել պայմանով, որ երեք տարի հետո, եթե չշարունակի աշխատանքը գրասենյակում, ապա այդ ներդրումը պետք է վերադարձվի:

Փաստաբան

Երևանի փաստաբանների վրա ծառայության ինքնարժեքն ավելի էժան է նստում, քան մարզերինը: Օրինակ, Հակակոռուպցիոն կոմիտեն և դատարանը բացառապես Երևանում են գտնվում, ուստի այնտեղ հասնելու ծախսը տարբեր է:

Փաստաբան

ՊԵԿ տվյալների և փորձագիտական հարցազրույցների համադրումը ցույց է տալիս, որ հարկային բեռը փաստացի տեղափոխվել է սպառողի՝ քաղաքացու ուսերին:

Բացի այդ, մարզերում, որտեղ բնակչության վճարունակությունն ավելի ցածր է, հարկային նույնական դրույքաչափերի կիրառումը ստեղծել է անհամաչափ բեռ: Մարզային փաստաբանները կա՛մ դուրս են մղվում շուկայից, կա՛մ ստիպված են առաջարկել ծառայություններ, որոնք քաղաքացիների համար այլևս հասանելի չեն:

4. Անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված խնդիրները՝ պայմանավորված հարկային բեռի փոփոխություններով.

Հարկային բեռի ավելացումը ազդել է ոչ միայն վճարովի փաստաբանական ծառայությունների արժեքի, այլև անվճար իրավաբանական օգնության տրամադրման համակարգի վրա: Վճարովի ծառայությունների թանկացման պայմաններում անձանց մի մասը, ովքեր նախկինում օգտվում էին վճարովի փաստաբանական ծառայություններից, կորցնում է այդ հնարավորությունը, և փորձում են գտնել անվճար իրավաբանական օգնություն ստանալու տարբերակներ (օրինակ՝ դիմում են հասարակական կազմակերպություններին նման աջակցության համար կամ փորձում գտնել փաստաբան, ով անվճար կաջակցի իրենց): Հետևաբար, հարկային փոփոխությունների ազդեցությունը պետք է գնահատել նաև այն հարցի համատեքստում, թե որքանով են գործող անվճար օգնության մեխանիզմները ունակ իրենց վրա վերցնել և ապահովել իրավաբանական օգնության սահմանադրական իրավունքի գործնական իրացումը:

Ինչպես նշվեց, ՀՀ սահմանադրական դատարանը 10 հունիսի 2025 թվականի ՄԴԱՌ-9 որոշմամբ, անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի համատեքստում, առանձնացրել է երկու հիմնական մեխանիզմ: Առաջինը պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնության տրամադրումն է՝ Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով: Երկրորդը հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումն է: Այս երկու մեխանիզմներն ամրագրված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխում, որը կարգավորում է հանրային պաշտպանությունը և կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը: Ընդ որում, կամավոր անհատույց իրավաբանական օգնությանը վերաբերող հատուկ կարգավորումը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում ներդրվել է 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքով:³⁸

Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի՝ «Հանրային պաշտպանությունը» վերտառությամբ 41-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է այն անձանց շրջանակը, ում Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից (բացառությամբ քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված անձին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն

³⁸ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (ՀՕ-366-Ն), ընդունված՝ 05.10.2022թ., <https://www.arlis.am/hy/acts/169828>

տրամադրելու, ինչպես նաև նշված հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի) տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն:

Նախ և առաջ հարկ է նշել, որ շահառուների գործող շրջանակը չի ընդգրկում իրավական պաշտպանության կարիք ունեցող մի շարք անձանց: Օրինակ՝ անվճար իրավաբանական օգնության համակարգից կարող են դուրս մնալ այն անձինք, որոնք դիմել են կենսաթոշակի նշանակման կամ վերահաշվարկի համար և մերժվել են, սակայն չեն համարվում սոցիալապես անապահով կամ միայնակ չեն: Նույն խնդիրը կարող է առաջանալ ֆունկցիոնալության խմբի սահմանման մերժման բողոքարկման դեպքում: Գործնականում համակարգից կարող են դուրս մնալ նաև այն անձինք, որոնք թեև համապատասխանում են շահառուի որոշ չափանիշների, սակայն կոնկրետ գործով դրամական պահանջի չափը գերազանցում է օրենքով սահմանված շեմը և այլն: Բացի այդ, գործող կարգավորումները բավարար չափով չեն ընդգրկում Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու կարիք ունեցող անձանց և մարդու հիմնարար իրավունքների խախտումների հետ կապված մի շարք գործեր:

Միաժամանակ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Հանրային պաշտպանի գրասենյակը նույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց հանրային պաշտպանությունը, հաշվի առնելով իրավաբանական օգնություն տրամադրելու օրենսդրական սահմանափակումները, կարող է կազմակերպել նաև՝

1) հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների միջոցով, որոնք կամավոր ընդգրկվել են Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական օգնություն տրամադրող անձանց ցուցակում:

2) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով Հանրային պաշտպանի գրասենյակ դիմած փաստաբանների միջոցով:

3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների) օժանդակության միջոցով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի՝ «Կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը» վերտառությամբ 44.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը կամավոր հիմունքներով իրավաբանական օգնության անհատույց տրամադրումն է նույն օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով

նախատեսված անձանց, բացառությամբ նույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Այս սահմանումը կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը կապում է հիմնականում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված շահառուների շրջանակի հետ: Նման մոտեցումը կարող է նեղացնել Pro Bono օգնության բովանդակությունը, քանի որ փաստաբանի կամավոր անհատույց օգնությունը գործնականում կարող է տրամադրվել ոչ միայն օրենքով նախապես թվարկված սոցիալական խմբերին, այլև մարդու իրավունքների խախտումների, ռազմավարական դատավարության, հանրային նշանակության կամ ակնհայտ իրավական պաշտպանության կարիք ունեցող այլ գործերով: Pro Bono օգնության էությունը փաստաբանի մասնագիտական անկախության և կամավորության վրա հիմնված աջակցությունն է, ուստի այն չպետք է ընկալվի բացառապես Փաստաբանների պալատի կողմից հաշվառվող, կազմակերպվող կամ խրախուսվող ծրագրերի շրջանակում:

Գործնականում մինչև փոփոխությունները ՀՀ-ում անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերվում էր հետևյալ կառույցների և սուբյեկտների միջոցով.

- Հանրային պաշտպանի գրասենյակ (միայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված անձանց),

- Համալսարանական իրավաբանական կլինիկաներ (օր.՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան, Հայաստանում ֆրանսիական համալսարանի իրավաբանական կլինիկան. կլինիկաներում խորհրդատվությունը տրամադրվում է ուսանողների կողմից՝ դասախոսների ղեկավարությամբ, դատական ներկայացուցչություն չի իրականացվում),

- Փաստաբանների պալատի՝ փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաներ (ուսանողների (ունկնդիրների) օժանդակության միջոցով, աջակցությունը ցուցաբերվում է ՀՊԳ գրասենյակին աջակցելու միջոցով),

- Անհատ փաստաբաններ և փաստաբանական գրասենյակներ՝ Փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող անվճար իրավաբանական աջակցության նախաձեռնությունների համատեքստում,

- Անհատ փաստաբանները և փաստաբանական գրասենյակները՝ ՓՊ նախաձեռնություններից դուրս (սովորաբար ներառում է նաև դատական ներկայացուցչությունը՝ ըստ անհրաժեշտության):

- Ոլորտային հասարակական կազմակերպություններ (կախված ծրագրերից՝ կարող է ներառել դատական ներկայացուցչությունը, սակայն հիմնականում սահմանափակված է շահառուների կամ գործերի կոնկրետ շրջանակով):

Այսպիսով, անվճար իրավաբանական օգնության համակարգը գործնականում կազմված է ոչ թե մեկ, այլ մի քանի փոխլրացնող օղակներից: Հանրային պաշտպանի գրասենյակը պետական հիմնական մեխանիզմն է, սակայն դրա սահմանափակ շահառուների շրջանակը և ծանրաբեռնվածությունը տարիներ շարունակ լրացվել են մասնավոր փաստաբանների, փաստաբանական գրասենյակների, իրավաբանական կլինիկաների և հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցությամբ: Թե հարկային բեռի փոփոխությունների համատեքստում գործնականում որքանով են իրագործելի Սահմանադրական դատարանի կողմից նշված մեխանիզմները, և ինչ հետևանքներ են առաջանում անվճար իրավաբանական օգնության մյուս մեխանիզմների սահմանափակ գործունակության պայմաններում, կներկայացվի հաջորդ ենթագլուխներում:

4.1. Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունները. Սահմանադրական երաշխիքներ և գործնական խոչընդոտներ.

Մասնավոր փաստաբանական ծառայությունների թանկացման և կամավոր անհատույց իրավաբանական օգնության կրճատման ռիսկերի պայմաններում Հանրային պաշտպանի գրասենյակը դառնում է այն հիմնական պետական մեխանիզմը, որին պետք է դիմեն վճարովի իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորություն չունեցող անձինք: Սակայն հետազոտության շրջանակում հավաքագրված տվյալները ցույց են տալիս, որ ՀՊԳ-ի ֆինանսական, մարդկային և տարածքային ռեսուրսները չեն ավելացվել այն չափով, որը կարող էր համարժեք արձագանքել անվճար իրավաբանական օգնության պահանջարկի աճին:

4.1.1. Հանրային պաշտպանի գրասենյակի լրակազմը և ֆինանսավորումը.

Փաստաբանական ծառայությունների հարկային բեռի ավելացման պայմաններում սոցիալապես անապահով անձանց պատշաճ իրավաբանական աջակցության հարցի

հասցեագրումը ՀՀ կառավարությունը դիտարկում էր լուծել Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայությունների միջոցով՝ զարգացնելով գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները³⁹:

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ ռազմավարությամբ (Ռազմավարություն) և գործողությունների ծրագրով նախատեսվում էր ՀՊԳ փաստաբանների հաստիքների ավելացում առնվազն 10-ով, այդ թվում՝ անհրաժեշտ ֆինանսավորմամբ (ՀՀ պետական բյուջե տարեկան շուրջ 68 մլն ՀՀ դրամ)՝ կատարման վերջնաժամկետը՝ 2023թ. առաջին կիսամյակ:⁴⁰ Մինևույն ժամանակ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ ռազմավարության և գործողությունների ծրագրի մշտադիտարկման և գնահատման վերաբերյալ 2023 թվականի ամփոփ զեկույցի համաձայն՝ իրավաբանական օգնության ոլորտի բարեփոխումների առնչությամբ, կարևորելով քաղաքացիների անվճար իրավաբանական օգնության պատշաճ ապահովումը, 10 հաստիքով ավելացվել է հանրային պաշտպանների կազմը:⁴¹

Սակայն 2023-2026 թվականներին ՓՊ-ի կողմից Հանրային պաշտպանի գրասենյակի համար պահանջված հաստիքների, հաստատված պետական բյուջեի, ՀՊԳ-ին հատկացված հաստիքների և վերջիններիս վարած գործերի քանակը ցույց են տալիս այլ պատկեր:⁴²

³⁹ «Ազատություն» ռադիոկայան, «Հանրային պաշտպանի գրասենյակի բյուջեն այս տարի պակասել է, հաստիքները 11-ով կրճատվել», 2025թ., <https://www.azatutyun.am/a/hanrayin-pashtpani-grasenyaki-byujen-ays-tari-pakasel-e-hastignery-11-ov-krchatvel/33306833.html>

⁴⁰ ՀՀ կառավարության 21 հուլիսի 2022 թվականի N 1133-Լ որոշում, Հավելված 2՝ «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիր», <https://moj.am/storage/uploads/tsragir2022.pdf>


⁴¹ ՀՀ արդարադատության նախարարություն, «Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի մշտադիտարկման և գնահատման վերաբերյալ 2023 թվականի ամփոփ զեկույց», https://moj.am/storage/uploads/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_2023.pdf

⁴² ՀՀ Արդարադատության նախարարություն, բյուջե և վիճակագրություն, <https://moj.am/page/statistics/p/2> ; ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին», ընդունված՝ 08.12.2022թ., <https://www.arlis.am/hy/acts/176598>, ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին», ընդունված՝ 07.12.2023թ., <https://www.arlis.am/hy/acts/187777> ; ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին», ընդունված՝ 04.12.2024թ., <https://www.arlis.am/hy/acts/200713> , ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին», ընդունված՝ 04.12.2025թ., <https://www.arlis.am/hy/acts/217676>

Աղյուսակ 4՝ Հանրային պաշտպանի գրասենյակի համար պահանջված հաստիքների քանակը (որի համար պահանջվել է ֆինանսավորում), հաստատված պետական բյուջեն, հաստիքների քանակը և վարած գործերի թիվը՝ 2023-2026 թվականների ընթացքում.

Տարեթիվը	Փաստաբանների պալատի կողմից պահանջված հաստիքների քանակը (որի համար պահանջվել է ֆինանսավորում)	Հաստատված ֆինանսավորման չափը (հազ. դրամ)	Հանրային պաշտպանի գրասենյակին հատկացված հաստիքների քանակը	Հանրային պաշտպանների վարած գործերի քանակը
2023թ.	83	609,535.7	69	21,551
2024թ.	79	676,703.0	69 (հուլիսից 84)	31,830
2025թ.	83	714,342.7	73	32,447
2026թ.	146	1,592,622.4	78	-

Դիագրամ 8՝ Հանրային պաշտպանի գրասենյակի հաստիքների քանակի փոփոխությունը՝ 2022-2025 թվականների ընթացքում.⁴³



⁴³ ՀՀ փաստաբանների պալատի 2023թ. հաշվետվությունները ռազմավարության կառավարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2023-hashvetvutyun.pdf, ՓՊ 2024 թ. հաշվետվությունները ռազմավարության կառավարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2024-.pdf, ՓՊ նախագահի որոշում հանրային պաշտպանների մասնագիտացումը սահմանելու և հաստիքները տեղաբաշխելու մասին, https://advocates.am/images/Voroshum_355-L.PDF : Հաստիքների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել նաև ՀՀ փաստաբանների պալատի կողմից:

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2023-2025 թվականներին Հանրային պաշտպանի գրասենյակի վարած գործերի թիվը 21,551-ից հասել է 32,447-ի՝ աճելով շուրջ 50.6%-ով: Մինչդեռ հաստիքների քանակը 2023 թվականի 69-ից 2025 թվականին դարձել է 73, այսինքն՝ երկարաժամկետ առումով ավելացել է ընդամենը 4 հաստիքով: Արդյունքում մեկ հանրային պաշտպանի միջին ծանրաբեռնվածությունը 2023 թվականին կազմել է մոտ 312 գործ, 2024 թվականին՝ մոտ 379 գործ (տարվա ավարտի հաստիքային ցուցանիշով հաշվարկելու դեպքում), իսկ 2025 թվականին՝ մոտ 444 գործ:

Սա ցույց է տալիս, որ անվճար իրավաբանական օգնության պահանջարկի աճը չի ուղեկցվել մարդկային ռեսուրսների համարժեք ավելացմամբ: Փաստաբանների պալատի կողմից փոխանցված տեղեկությունը և տվյալների փաստացի ուսումնասիրությունը ցույց են տալիս նաև, որ 2024թ.-ի հուլիսից կատարված հաստիքների ավելացումը կրել է ձևական և կարճաժամկետ բնույթ: 2024 թվականին ՀՊԳ-ին հատկացվել են հավելյալ հաստիքներ, որոնք գործել են ընդամենը 6 ամիս ժամկետով, իսկ 2025 թվականի բյուջեով դրանք փաստացի կրճատվել են:

«2024 թվականի սկզբին ՀՀ պետական բյուջեով Գրասենյակի գործունեության համար նախատեսվել էր 69 հանրային պաշտպանի հաստիքի ֆինանսավորում: Սակայն հաշվի առնելով Գրասենյակի կողմից վարվող գործերի քանակի զգալի աճը և հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության էական ավելացումը, որը հիմնականում պայմանավորված էր 2022թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներով՝ 2024 թ.-ի հուլիսից ՀՀ պետական բյուջեում կատարված փոփոխությամբ Գրասենյակին հատկացվեց հավելյալ 15 հաստիքի համար անհրաժեշտ գումար: Դրան հակառակ, սակայն, չնայած Գրասենյակի կողմից վարվող գործերի շարունակական աճին, 2025 թ.-ի պետական բյուջեով հանրային պաշտպանների հաստիքների ընդհանուր քանակը նվազեցվել է 11-ով (15 հաստիքի համար հատկացված լրացուցիչ միջոցների հատկացում 2025թ. տեղի չի ունեցել, իսկ 2024թ. հաստատված պետական բյուջեով նախատեսված էր ավելացում միայն 4 հաստիքի չափով):

Փաստացի 2024 թվականի հուլիսից հատկացվել է հավելյալ 15 հաստիք, որը սակայն հաջորդ 2025 թվականին կրկին նվազեցվել է: Այսինքն՝ հանրային պաշտպանների հաստիքները ավելացել են 4-ով, իսկ անգամ Ռազմավարությամբ սահմանված փոփոխությունը չի ապահովվել:⁴⁴

⁴⁴ «Հանրային պաշտպանի գրասենյակի բյուջեն այս տարի պակասել է, հաստիքները՝ 11-ով կրճատվել», «Ազատություն» ռադիոկայան, 08 փետրվարի 2025թ., <https://www.azatutyun.am/a/hanrayin-pashtpani-grasenyaki-byujen-ays-tari-pakasel-e-hastiqnery-11-ov-krchatvel/33306833.html>

Ըստ Պալատի տվյալների՝ 2024 թվականին առավել ակնառու է դարձել նաև հանրային պաշտպանների աշխատավարձի խնդիրը, քանի որ օրենսդրորեն դրա չափը, թեպետ հավասարեցված է Երևան քաղաքի ավագ դատախազի աշխատավարձի դրույքաչափին, սակայն փաստացի, գրեթե կրկնակի զիջում է նշված պաշտոնին նշանակված անձանց վարձատրության չափին, քանի որ վերջիններիս, ի տարբերություն հանրային պաշտպանների, վճարվում են նաև հավելավճարներ: Ըստ Փաստաբանների պալատի՝ միակ փոփոխությունը օրենսդրական փոփոխությունների արդյունքում այն է, որ «Փաստաբանության մասին» օրենքով սահմանվել է հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքի դիմաց վճարման կարգավորումը, որը որոշ չափով մեղմել է խնդիրը⁴⁵:

Թեև վերջերս ընդունված փոփոխություններով սահմանվել է արտաժամյա աշխատանքի վճարման կարգ, ֆինանսական խթանները դեռևս համարժեք չեն գերծանրաբեռնված ծառայության պահանջներին:

Հանրային պաշտպանների վարձատրության անհամարժեքությունը ոչ միայն աշխատանքային պայմանների խնդիր է, այլև անվճար իրավաբանական օգնության որակի և համակարգում մասնագետների պահպանման հարց: Ծայրահեղ ծանրաբեռնվածության, ցածր համեմատական վարձատրության և մարզային բարդությունների պայմաններում դժվարանում է բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավումն ու պահպանումը ՀՊԳ համակարգում:

Ձուգահեռ խնդիր կա, իհարկե պետությունը երաշխավորում է անվճար օգնությունը, բայց մյուս խնդիրն այն է, որ այս փոփոխությունը զուգահեռ չգնաց հանրային պաշտպանի ինստիտուտի հզորացման հետ, այսինքն՝ եթե իրենք զուգահեռ բարձրացնեն հանրային պաշտպանների աշխատավարձը, նվազեցնեն աշխատանքային ծավալը յուրաքանչյուրի և ավելացնեն պաշտպանների քանակը, ես գտնում եմ, որ զուցե այսքան ծանր չտանեի այս փոփոխությունը, քանի որ կիմանայի, որ կարող ենք մարդկանց ուղղորդել հանրային պաշտպանի ինստիտուտ:

ՀԳ ներկայացուցիչ

⁴⁵ ՀՀ փաստաբանների պալատի 2021-2025թթ. գործունեության վերաբերյալ ամփոփագիրը, https://advocates.am/images/nakhagahi_voroshumner/ampopagir_2021-2025.pdf

Հաստիքների և ֆինանսավորման խնդիրը արդիական է նաև 2026թ. բյուջետային տարվա համար: Փաստաբանների պալատի փոխանցած տվյալներով՝ 2026-2028թթ բյուջետային հայտով 2026 թվականի համար պահանջվել է 146 հանրային պաշտպանի հաստիքի ֆինանսավորում, մինչդեռ հատկացվել է 78 հաստիքի ֆինանսավորում: Սա վկայում է, որ ՀՊԳ-ի իրական կարիքների և պետական ֆինանսավորման միջև առկա բացը շարունակում է պահպանվել:

4.1.2. Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը.

Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը տարիներ շարունակ առկա խնդիր է, որը խորացել է մի քանի գործոնների համադրությամբ՝ նոր քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելու, գործերի ընդհանուր աճի, մասնավոր փաստաբանական ծառայությունների թանկացման, կամավոր անհատույց իրավաբանական օգնության կրճատման ռիսկերի և ՀՊԳ հաստիքների ոչ համարժեք ավելացման պայմաններում:

Թեև հարկային փոփոխություններից հետո ՀՊԳ ուղղորդված նման գործերի ամբողջական վիճակագրական ծավալը դեռևս հնարավոր չէ գնահատել, հարցազրույցների տվյալները վկայում են, որ մասնավոր փաստաբանների կողմից անվճար աջակցությունից հրաժարվելու կամ այն կրճատելու դեպքերը գործնականում հանգեցրել են քաղաքացիների ուղղորդմանը դեպի Հանրային պաշտպանի գրասենյակ:

Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո բազմաթիվ դեպքեր են եղել, երբ մարդիկ դիմել են մեզ ընթացքի մեջ գտնվող գործերով, ասել են, որ իրենք ունեցել են փաստաբան, ով անվճար գրադվել է գործով, սակայն այժմ հրաժարվում է անվճար աջակցելուց, ուղղորդելով անձին ՀՊԳ: Ու նման գործեր ունեցել ենք հենց 2025թ. հունվարին:

Փաստաբանների պալատի ներկայացուցիչ

Թվային տվյալները ցույց են տալիս, որ գործերի հոսքը ավելանում է արագ տեմպերով, մինչդեռ միայն հանրային պաշտպանների կազմի ընդլայնումը (թեև փաստացի չի ապահովվել պետության կողմից) բավարար չէ բեռի էական թեթևացման համար:

Շարունակական բարձր ծանրաբեռնվածությունը համարվում է համակարգի հիմնական մարտահրավերներից մեկը: Փաստաբանների պալատը տարիներ շարունակ արձանագրում է, որ հանրային պաշտպանի ծառայությունների վրա կա

գերծանրաբեռնվածություն. յուրաքանչյուր պաշտպանի բաժին ընկնող գործերի անընդհատ աճող թիվը վտանգում է տրամադրվող օգնության որակը:

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվում էր հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը մինչև 2024-ի ավարտը թեթևացնել 30 տոկոսով⁴⁶:

Սակայն Հանրային պաշտպանի գրասենյակի, Փաստաբանների պալատի կողմից տրամադրած, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կայքում առկա տեղեկատվությունը⁴⁷ ցույց է տալիս Հանրային պաշտպանի գրասենյակի վարած գործերի քանակի վերաբերյալ հետևյալ պատկերը.

Աղյուսակ 5՝ Հանրային պաշտպանի գրասենյակի վարած գործերի քանակը՝ ըստ տարիների.

 Տարեթիվը	 ՀՊԳ-ի վարած գործերի քանակը	 «Ընդ որում» քաղաքացիական/վարչական	 Ընդ որում՝ քրեական	 Քանի դիմում է մերժվել	 Քանի հաստիքով են վարվել գործերը
2023թ.	21551	6033	15518	4	69
2024թ.	31830	7920	23910	1	84
2025թ.	32447	7536	24911	3	73

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ռազմավարության ծրագրի կատարման և և տարեկան գործունեության վերաբերյալ 2023 և 2024 թվականների հաշվետվությունների համաձայն՝ Փաստաբանների պալատը տարիներ շարունակ բարձրացրել է Հանրային պաշտպանի գրասենյակի գերծանրաբեռնվածության խնդիրը: Գերծանրաբեռնվածությունը թոթափելու ուղղությամբ ՀՀ փաստաբանների պալատի ձեռնարկած միջոցների, արդարադատության ոլորտում լիազոր պետական մարմնի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումների և քննարկումների արդյունքում 2024

⁴⁶ ՀՀ կառավարության 18 նոյեմբերի 2021 թվականի N 1902-Լ որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», <https://www.arlis.am/hy/acts/218583>

⁴⁷ Տե՛ս, այդ թվում՝ ՓՊ 2023թ. հաշվետվությունները ռազմավարության ծրագրի կատարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2023-hashvetvutyun.pdf ; ՓՊ 2024 թ. հաշվետվությունները ռազմավարության ծրագրի կատարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2024-.pdf; ՀՊԳ Հարցման պատասխան էլից 04.12.2025թ, թիվ 062/19290, Փաստաբանների պալատի կողմից փոխանցված տեղեկատվություն:

թվականի երկրորդ կիսամյակից հետո Գրասենյակին հատկացվել է 15 լրացուցիչ հաստիք: Ըստ Պալատի՝ Հանրային պաշտպանների համար հատկացված 84 հաստիքների բաղդատման արդյունքում, հաշվետու տարվա ավարտին, 84 հաստիքները զբաղեցվել են շուրջ 111 հանրային պաշտպանի կողմից⁴⁸:

ՀԿ ներկայացուցիչների հետ հարցազրույցները ևս ցույց են տալիս, որ ՀՊԳ ծանրաբեռնվածությունը որոշ դեպքերում հանգեցնում է այնպիսի իրավիճակի, երբ նույնիսկ ձևականորեն շահառու համարվող անձինք գործնականում չեն ստանում բավարար իրավաբանական աջակցություն կամ չեն կարողանում ապահովել որակյալ ներկայացուցչություն իրենց գործերով:

Այսօր մենք չենք ուղղորդում մարդկանց հանրային պաշտպանի գրասենյակ:

Նախկինում ուղղորդում էինք ՀՊԳ, բայց հիմա ծավալներն այնքան մեծ են, որ եթե նույնիսկ անձը լրիվ չափանիշներին համապատասխանում է, մերժում են, ուղղակի ասում են, որ ես չեմ կարող այս գործով զբաղվել, քանի որ ունեմ ընթացիկ 400 գործ ու այդ գործերով ներկայացուցչություն ապահովել այլևս անհնար է:

Ու նույնիսկ այն դեպքերը, որտեղ հանրային պաշտպանները ավանդաբար լայն ներգրավվածություն են ունեցել, ասենք՝ ոչ հոժարակամ բուժման բողոքարկման դեպքեր, հաշմանդամության սահմանում, այդ դեպքերում էլ միշտ չի, որ այդ պատասխանատվությունը ցանկանում են ստանձնել արդեն:

ՀԿ ներկայացուցիչ

4.1.3. ՀՊԳ տարածքային հասանելիության խնդիրը.


Առանձնապես կարևոր է ՀՊԳ ծանրաբեռնվածության և տարածքային հասանելիության հարցը: Հանրային պաշտպանի գրասենյակը վարում է տարեցտարի աճող թվով գործեր, իսկ մարզերում դրա ներկայությունն ու նյութատեխնիկական պայմանները հաճախ անբավարար են: ՀՊԳ նստավայրերը հիմնականում տեղակայված են Երևանում և խոշոր քաղաքային բնակավայրերում, մինչդեռ սպասարկվող տարածքները

⁴⁸ ՓՊ 2024 թ. հաշվետվությունները ռազմավարության ծրագրի կատարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2024-.pdf

ընդգրկում են նաև հեռավոր համայնքներ, ինչի հետևանքով որոշ բնակիչների համար անվճար իրավաբանական օգնության փաստացի հասանելիությունը բարդանում է:

Ըստ ՀՊԳ կայքում առկա քարտեզի՝ Գրասենյակի նստավայրերը տեղեկայված են Երևան քաղաքում և խոշոր քաղաքային բնակավայրերում, որոնք սպասարկում են հանրապետության ամբողջ տարածքը:⁴⁹

Նկար 2՝ Հանրային պաշտպանի գրասենյակի նստավայրերի տարածքային բաշխվածությունը Հայաստանի Հանրապետությունում.



Ըստ Պալատի՝ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ մարզերում, անվճար իրավաբանական օգնության տրամադրման արդյունավետությունն ապահովելու նպատակով, հանրային պաշտպանների հաստիքները տեղաբաշխվել են վարչատարածքային սկզբունքով՝ ըստ մարզերի, ինչպես նաև ըստ մասնագիտացման (քրեաիրավական, քաղաքացիաիրավական), դատարանների նստավայրերի, վարույթն իրականացնող մարմինների, քրեակատարողական հիմնարկների և գործերի քանակի հաշվառմամբ, հաշվի առնելով նաև շահերի բախման առաջացման հնարավոր վտանգը⁵⁰:

Այսպես, օրինակ՝ 2026 թվականի համար մարզերում տեղաբաշխված հանրային պաշտպանների հաստիքների վերլուծությունն ունի հետևյալ պատկերը⁵¹.

⁴⁹ Հանրային պաշտպանի գրասենյակ, «Նստավայրեր», <https://hpg.am/am/site/Seats>

⁵⁰ ՓՊ 2024 թ. հաշվետվությունները ռազմավարության ծրագրի կատարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2024-.pdf

⁵¹ <https://court.am/hy> ; https://advocates.am/images/Voroshum_355-L.PDF , <https://www.arlis.am/hy/acts/221812>



**Աղյուսակ 6՝ Մարզերում տեղաբաշխված հանրային պաշտպանների հաստիքները,
դատարանների նստավայրերը և հանրային պաշտպանների քանակը՝
2026 թվականի դրությամբ**

 ՀՀ մարզ	 ՀԳԳ նստավայր	 Դատարանի նստավայրը	 Հաստիքների ընդ. քանակը	 ՀԳ-ների քանակը
 Արագածոտն	Աշտարակ	Աշտարակ(քաղ., քր.), Ապարան (քաղ., քր.)	3,5	4
 Արարատ	Արտաշատ, Մասիս	Արտաշատ (քաղ., քր.), Մասիս (քաղ., քր.), Վայք (քաղ., քր.)	5,25	9
 Արմավիր	Արմավիր, Էջմիածին	Արմավիր (քաղ., քր.), Էջմիածին (քաղ., քր.)	7,5	11
 Գեղարքունիք	Գավառ, Սեան, Մարտունի	Գավառ (քաղ., քր.), Սեան (վարչ. քաղ., քր.), Վարդենիս (քր.), Ճամբարակ (քաղ.)	3,5	6
 Կոտայք	Հրազդան, Արուսյան, Եղվարդ, Չարենցավան	Հրազդան(քաղ.), Արուսյան (քաղ., քր.), Եղվարդ (քաղ., քր.), Չարենցավան (քր.)	4,5	10
 Սյունիք	Կապան, Գորիս, Սիսիան	Կապան(քաղ., քր.), Գորիս (վարչ. քաղ., քր.)	3	7
 Վայոց ձոր	Եղեգնաձոր	Արտաշատ (քաղ., քր.), Մասիս (քաղ., քր.), Վայք (քաղ., քր.)	1	2
 Տավուշ	Իջեան, Դիլիջան	Իջեան (քաղ., քր.), Դիլիջան(քաղ.), Նոյեմբերյան (քաղ.), Բերդ (քր.)	2,75	6
 Լոռի	Վանաձոր	Վանաձոր (վարչ. քաղ., քր.), Ալավերդի(քաղ.), Սպիտակ (քաղ., քր.), Ստեփանավան (քաղ.)	4,25	6
 Շիրակ	Գյումրի	Գյումրի (վարչ., քաղ., քր.), Մարալիկ (քաղ., քր.)	4,75	7

Վերլուծությունը ցույց է տալիս, որ համակարգը բնութագրվում է էական անհամաչափություններով. մի կողմից, մարզերի միջև նկատվում է բնակչությանը հասանելի ռեսուրսների զգալի տարբերություն, մյուս կողմից՝ տարածքային բեռնվածությունը որոշ մարզերում բազմակի ավելի բարձր է: Հատկապես մեծ տարածք ունեցող մարզերում (ինչպիսիք են Գեղարքունիքը, Վայոց ձորը, Սյունիքը) սահմանափակ հաստիքների համադրումը հանգեցնում է այն իրավիճակին, երբ մեկ պաշտպանին բաժին է ընկնում ոչ միայն մեծ թվով բնակչություն, այլև լայն աշխարհագրական տարածք: Միաժամանակ, դատարանների նստավայրերի տարածքային բաշխվածությունը և դրանց միջև հեռավորությունները լրացուցիչ ազդեցություն են ունենում համակարգի արդյունավետության վրա: Այն մարզերում, որտեղ դատարանները տեղակայված են մի քանի քաղաքներում կամ առկա է միջմարզային կախվածություն (մեկ դատարանը սպասարկում է երկու մարզ), հանրային պաշտպանները ստիպված են կատարել հաճախակի և երկարատև տեղաշարժեր, ինչը նվազեցնում է նրանց ժամանակային ռեսուրսը և փաստացի ծառայության մատչելիությունը: Արդյունքում, նույնիսկ բավարար

թվով պաշտպանների առկայության դեպքում նման իրավիճակը կարող է բացասաբար անդրադառնալ պաշտպանության ծառայության որակի, դատական գործընթացների արդյունավետության և արդար դատաքննության իրավունքի իրացման վրա: Իսկ առկա իրավիճակում նշված խնդրին գումարվում է նաև ոչ բավարար հաստիքներ ունենալու խնդիրը:

Մենք գրասենյակ (ՀՊԳ) ունենք Կապանում, Մեղրիում վերջերս ենք հանրային պաշտպան ներգրավել: Տարածությունը շատ մեծ է: Թվում է, թե մեկ մարզ է, բայց, օրինակ, Գորիսից Կապան ճանապարհը 2 ժ. է, նույնը՝ Կապանից Մեղրի: Եթե ունենք քրեական գործ, որով երկու մեղադրյալ կա, առաջանում է նաև շահերի բախման խնդիր ու լրացուցիչ հանրային պաշտպան ներգրավելու հարց է առաջանում: Ամեն անգամ պետք է արձանագրություն կազմենք, օրինակ՝ Կապանից հանրային պաշտպան հրավիրելու համար, որ մի փաստաթուղթ ստորագրի կամ հարցաքննության մասնակցի կես ժամով: Իսկ կես ժամ մասնակցելը նշանակում է, որ հանրային պաշտպանը պետք է 2 ժամ գա, երկու ժամ հետ գնա, որ կես ժամ հարցաքննության մասնակցի: Իսկ պատկերացրեք՝ պաշտպանը 0.5 հաստիքով է ներգրավված:

Փաստաբանների պալատի ներկայացուցիչ

Մարզային փաստաբանները որպես առանձին խնդիր ընդգծել են նաև այն, որ մարզերում հանրային պաշտպաններն արդեն իսկ ծանրաբեռնված են առանձնահատուկ քրեական գործերով, ինչի հետևանքով հաճախ չեն կարողանում բավարար չափով զբաղվել այլ խնդիրներով: Այս և այլ պատճառներով իրավունքների խախտման ենթարկված անձանց զգալի մասը փաստացի չի կարողանում օգտվել իր իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմներից:

Ծանրաբեռնվածությունը բերում է նրան, որ Հանրային պաշտպանները չեն կարողանում իրականացնել պատշաճ շահերի պաշտպանություն, մշակել ռազմավարություն և այլն: Արդյունքում, թեև Հանրային պաշտպանի ինստիտուտը կարողանում է մեծաթիվ շահառուների անվճար օգնություն տրամադրել, վերոհիշյալ խնդիրները խիստ սահմանափակում են դրա գործունեության արդյունավետությունն ու հասցեականությունը:

Վերը նշված սահմանափակումների պայմաններում ի հայտ են գալիս նաև հասարակական վստահության ծառայության արդյունավետության խնդիրներ: Ըստ հարցազրույցներին մասնակցած փաստաբանների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ ծանրաբեռնվածության պատճառով երբեմն հանրային պաշտպանները ստիպված են մերժել նոր դիմումներ կամ խուսափել հատկապես բարդ ու ժամանակատար գործերից՝ ուղղորդելով շահառուներին դեպի վճարովի ծառայություններ:

Եթե քրեական գործ է լինում նաև, ու միայն խորհրդատվությամբ հնարավոր չէ հարցը լուծել, ուղղորդում ենք հանրային պաշտպանի մոտ, քանի որ ընտանեկան բռնության գործերով անվճար է: Հաճախ ամենատարբեր պատճառներով (կամ նույնիսկ չեն կարողանում գործը իդենտիֆիկացնել որպես ընտանեկան բռնություն) հանրային պաշտպանը նշում է, որ չեն կարող անվճար աջակցել, այդ գործը վճարովի է, կամ սկսում են վճարովի ծառայություն մատուցել նույն անձին, կամ անձը չի ստանում աջակցություն, քանի որ վճարովիից չի կարողանում օգտվել:

ՀԿ ներկայացուցիչ

Այսպիսով, թեև Սահմանադրական դատարանը 2025 թվականի հունիսի 10-ի ՍԴԱՌ-9 որոշմամբ Հանրային պաշտպանի գրասենյակը դիտարկել է որպես անվճար իրավաբանական օգնության իրավունքի արդյունավետ իրացման հիմնական մեխանիզմներից մեկը, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարկային փոփոխություններից հետո ՀՊԳ-ն առկա հաստիքային, ֆինանսական և տարածքային ռեսուրսներով չի կարող ամբողջությամբ փոխհատուցել մասնավոր փաստաբանական ծառայությունների թանկացման և Pro Bono աջակցության կրճատման հետևանքով առաջացող պահանջարկը: Հարկային քաղաքականության փոփոխությունը, եթե չի ուղեկցվում ՀՊԳ-ի հաստիքների, ֆինանսավորման, տարածքային հասանելիության և վարձատրության համարժեք բարձրացմամբ, գործնականում հանգեցնում է անվճար իրավաբանական օգնության հասանելիության նեղացման և տրամադրվող օգնության որակի ռիսկերի մեծացման:

4.2. *Կամավոր անհատույց իրավաբանական օգնության (pro bono) հարկման պրակտիկ խնդիրները.*

4.2.1. *Pro Bono օգնության դերը և պետության պոզիտիվ պարտավորությունը.*

Pro Bono հասկացությունը միջազգային իրավական պրակտիկայում նշանակում է փաստաբանի կողմից իրականացվող մասնագիտական աշխատանք, որը մատուցվում է կամավոր հիմունքներով և անվճար՝ այն սուբյեկտներին, ովքեր ի վիճակի չեն վճարել իրավաբանական ծառայությունների համար: Pro Bono գործունեությունը սերտորեն փոխկապակցված է պետության կողմից ստանձնած՝ արդարադատության մատչելիության ապահովման պոզիտիվ պարտավորության (ՀՀ Սահմանադրություն, ՄԻԵԿ) հետ:

Միջազգային իրավունքի տրամաբանությամբ՝ պետությունը պետք է խրախուսի և հեշտացնի *Pro Bono* գործունեությունը: Pro bono իրավաբանական օգնությունը չի կարող փոխարինել պետության կողմից երաշխավորվող անվճար իրավաբանական օգնության համակարգին, սակայն կարող է լրացնել դրա բացերը և նպաստել այն անձանց պաշտպանությանը, ովքեր դուրս են մնում հանրային պաշտպանության գործող շրջանակից կամ գործնականում չեն կարողանում օգտվել վճարովի ծառայություններից: Հետևաբար պետության խնդիրը ոչ թե pro bono ծառայությունների իրականացման համար բարենպաստ, կանխատեսելի և հարկային առումով անվտանգ միջավայր ստեղծելն է:

4.2.2. *Պետության հռչակած քաղաքականությունը՝ Pro Bono մեխանիզմի զարգացման հարցում.*

Դեռևս ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսվել է փաստաբանության ոլորտի զարգացման համատեքստում, ի թիվս այլնի, զարգացնել անվճար իրավաբանական ծառայությունների մատուցման ինստիտուտը (հավելված 1, կետ 10)⁵²: Մասնավորապես, Կառավարության 18 նոյեմբերի 2021 թվականի N 1902-Լ որոշման հավելված 2-ում նշվում է, որ ըստ էության, առկա չեն փաստաբանների կողմից անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող և խթանող իրավակարգավորումներ, որոնք կարող էին մեծապես խթանել սոցիալապես անապահով անձանց իրավաբանական օգնություն ստանալը: Որպես հիմնավորում նշվել է, որ հարկ է Օրենքում նախատեսել փաստաբանների կողմից անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող և խթանող իրավական նորմեր՝ ապահովելով այդ հարաբերությունների

⁵² <https://www.arlis.am/hy/acts/218583>

որոշակիությունը, ինչպես նաև ստեղծելով երաշխիքներ անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող անձանց համար: Որպես արդյունք նախատեսվել է, որ կավելանա անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակը և կհստակեցվեն օգնություն ստանալու չափանիշները, կլուծվեն այդ հարաբերությունները կարգավորող նորմերում առկա իրավական խնդիրները (ընդգծումը մերն է): Իր հերթին, ակնկալվել է ներդնել փաստաբանների կողմից կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը կարգավորող և խրախուսող իրավական մեխանիզմներ՝ ապահովելով ինչպես կարիքավոր անձանց իրավական օգնություն ստանալու իրավունքը, այնպես էլ հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության թեթևացումը (ընդգծումը մերն է):

Նույն տրամաբանությունն արտացոլված է նաև ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում, որով նախատեսված է եղել վերանայել անվճար իրավաբանական օգնություն ստանալու սուբյեկտների շրջանակը, ներդնել կամավոր անհատույց իրավաբանական օգնության (*Pro Bono*) մեխանիզմներ: Որպես արդյունք նախատեսվել է, որ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների խմբերը ավելացվել են 3-ով և հաջորդ տարվա ընթացքում նոր խմբերի շուրջ 300 շահառու ստացել է անվճար իրավաբանական օգնություն (նպատակ 10, գործողություններ 10.2.1, 10.2.2, կատարման ժամկետը՝ 2022 թվականի 2-րդ կիսամյակ):⁵³

Այսպիսով, պետության հոչակած քաղաքականության մակարդակում *pro bono* մեխանիզմը դիտարկվել է որպես անվճար իրավաբանական օգնության համակարգը լրացնող և Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը թեթևացնող գործիք: Հետևաբար, հետագա հարկային քաղաքականությունը պետք է համահունչ լիներ այս նպատակին և չստեղծեր այնպիսի պայմաններ, որոնք փաստաբաններին կդրդեին կրճատել կամ դադարեցնել կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը:

⁵³ ՀՀ Կառավարություն 21 հուլիսի 2022 թվականի n 1133-լ որոշումը ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը եվ դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և հայաստանի հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի n 1441-լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, <https://www.arlis.am/hy/acts/166582>

4.2.3. Օրենսդրական փոփոխությունները. Pro Bono ծառայությունների մատուցման՝ օրենսդրորեն սահմանումը և շահառուների շրջանակի ընդլայնումը.

Ազգային ժողովի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվեց ՀՕ-366-Ն օրենքը, որով փոփոխություններ կատարվեցին «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում՝ ավելացնելով կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը կարգավորող 44.1 և 44.2 հոդվածները⁵⁴: Այսպես՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 44.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը կամավոր հիմունքներով իրավաբանական օգնության անհատույց տրամադրումն է սույն օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձանց, այսինքն՝ նույն անձանց, ովքեր համապատասխանում են հանրային պաշտպանի ծառայություններից օգտվելու համար սահմանված չափանիշներին:

Միաժամանակ, Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված լրացումներով ընդլայնվեց անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը՝ ներառելով երեք նոր խմբեր, մասնավորապես՝

- օտարերկրացիներ՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար.
- անձինք, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ.
- տուժողներ, եթե նրանք պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչև 16 տարեկան երեխա:

Հետագայում այս ցանկը համալրվել է ևս մեկ խմբով. 2024 թվականի նոյեմբերի 15-ին ՀՕ-466-Ն օրենքով «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված լրացման համաձայն՝ անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվում նաև քրեական վարույթներով իրավաբանական օգնության մասին օրենքով նախատեսված դեպքերում՝ հանցագործություն կատարելու կամ դատավճռի կատարման համար հետախուզվող անձանց:

Այս փոփոխությունները ցույց են տալիս, որ օրենսդիրը կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը դիտարկել է որպես անվճար իրավաբանական օգնության

⁵⁴ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք (ՀՕ-366-Ն), ընդունված՝ 05.10.2022թ., <https://www.arlis.am/hy/acts/169828>

համակարգը լրացնող մեխանիզմ: Օրենսդիրը ոչ միայն նախատեսել է կամավոր անհատույց իրավաբանական օգնության ինստիտուտը, այլև փուլային կերպով ընդլայնել է դրա շահառուների շրջանակը:

Միննույն ժամանակ, 44.1 հոդվածի ձևակերպումը pro bono օգնությունը կապում է օրենքով սահմանված շահառուների շրջանակի հետ, ինչը կարող է նեղացնել դրա կամավոր և անկախ բնույթը: Փաստաբանների պալատի հաշվառման և խրախուսման դերը կարևոր է, սակայն այն չպետք է հանգեցնի այն ընկալմանը, որ միայն Պալատի միջոցով կամ Պալատի չափանիշներով իրականացված օգնությունն է համարվում pro bono:

4.2.4. Փաստաբանների պալատի կարգավորումներով սահմանված Pro Bono խրախուսման չափանիշները.

Ռազմավարությունից բխող փոփոխություններից մեկն էլ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 44.1 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի ընդունումն էր, որի համաձայն՝ կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու նպատակով Փաստաբանների պալատի խորհուրդը սահմանում է այդ օգնության տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն ժամաքանակը և այլ չափանիշներ, այդ թվում՝ փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից կազմակերպվող կամավոր անհատույց իրավաբանական օգնության ծրագրերի չափանիշները:

Այս նորմի հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023 թ. թիվ 2/11-Լ որոշմամբ հաստատվել է «Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման կարգը»:⁵⁵ Որոշման 1-ին հավելվածի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի համաձայն՝ «Պալատի անդամ հանդիսացող յուրաքանչյուր փաստաբան, ինչպես նաև Պալատում հավատարմագրված այլ պետության փաստաբան կարող է շահառուներին (Շահառու են հանդիսանում «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խմբերի անձինք) կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրել ինչպես Գրասենյակ դիմելու, այդ նպատակով դիմած անձանց ցուցակում ընդգրկվելու և Գրասենյակից փոխանցված գործերը վարելու միջոցով, այնպես էլ՝ անմիջականորեն»:

⁵⁵ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 13.01.2023թ. թիվ 2/11-Լ որոշմամբ հաստատված «Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման մասին» կարգը, https://advocates.am/images/pdf_files/2025/_07.03.2025.pdf

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձի, ներառյալ՝ փաստաբանի համար կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման տարեկան **խրախուսելի նվազագույն ժամաքանակը 48 ժամն է, որը պետք է տրամադրվի առնվազն 2 անձի**: Կարգի 11-րդ կետի համաձայն՝ Կարգի 10-րդ կետում սահմանված ժամաքանակի մի մասը պետք է ծախսված լինի առնվազն 4 իրավաբանական բնույթի փաստաթղթի կազմման համար՝ վարչական մարմնին ուղղված բողոք, դատարանին ուղղված դիմում, հայցադիմում, վերաքննիչ բողոք, վճռաբեկ բողոք, դրանց պատասխան (առարկություն) կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի վարությանին ակտի դեմ բողոք: Կարգի 12-րդ կետի համաձայն՝ փաստաբանի դեպքում կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման տարեկան խրախուսելի նվազագույն ժամաքանակի մի մասը պետք է ծախսված լինի մեկ կամ մի քանի վարչական, դատական կամ մինչդատական քրեական վարույթի շրջանակում առնվազն 4 ժամ ներկայացուցչություն (պաշտպանություն) ապահովելու համար:

Բացի այդ, Կարգի 13-րդ կետով փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար ես սահմանվել են նվազագույն բաղադրիչներ՝ առնվազն 3 անձի իրավաբանական խորհրդատվություն, առնվազն 6 իրավաբանական բնույթի փաստաթղթի կազմում և առնվազն 6 ժամ ներկայացուցչության իրականացում, իսկ 4 և ավելի փաստաբան աշխատակից ունեցող կազմակերպությունների համար՝ այդ պահանջների կրկնակի ծավալով կատարում:

Այս կարգավորումները ցույց են տալիս, որ Pro Bono գործունեությունը օրենսդրությամբ և ենթաօրենսդրական ակտերով ոչ միայն թույլատրվում, այլև խրախուսվում և որոշակի չափով ինստիտուցիոնալացվում է: Փաստաբանից ակնկալվում է իրական, չափելի և շարունակական ներգրավվածություն հանրօգուտ իրավաբանական աշխատանքի մեջ: Սակայն հենց այս չափելի և շարունակական ներգրավվածության ակնկալիքը հակասության մեջ է մտնում հարկային օրենսդրությամբ սահմանված 5% շեմի հետ. որքան ավելի ակտիվ է փաստաբանը կամ գրասենյակը pro bono գործերով, այնքան ավելի մեծ է շեմը գերազանցելու և հարկային պարտավորության առաջացման ռիսկը:

ՀՀ փաստաբանների պալատի 2024թ. հաշվետվության մեջ Պալատը շեշտել է, որ «հասարակությունը մշտապես ունեցել է անվճար իրավաբանական աջակցության կարիք: Հաշվի նստելով հասարակության պահանջմունքների հետ՝ ՀՀ փաստաբանների պալատն իր համար առաջնային է համարել բոլոր միջոցներով իր անդամ յուրաքանչյուր փաստաբանի կողմից անվճար իրավաբանական օգնության և մասնագիտական անվճար աջակցության տրամադրմանը նպաստելը: Թեև անվճար իրավաբանական օգնություն

տրամադրում է գրեթե յուրաքանչյուր փաստաբան, այնուամենայնիվ Պալատն անհրաժեշտ է համարել խրախուսել այս տեսակ հանրագոտ աշխատանքը, նախ՝ պահպանելու համար դրա շարունակականությունը, այնուհետև՝ բարձրացնելու այդ գործում ներգրավված փաստաբանների քանակը: [...] Սակայն, ըստ Պալատի, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շուրջ ձևավորված իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 2024 թվականին, պետությունն այս ուղղությամբ սկսեց վարել նախկինից խիստ տարբերվող և աշխարհում նախադեպը չունեցող քաղաքականություն: Մասնավորապես՝ շրջանառության մեջ դրվեց և ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն ՀՀ օրենքը, որով նախատեսվեց 2025 թվականի հունվարի 1-ից հարկման ենթարկել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը»⁵⁶:

Պալատի կողմից կազմակերպվող pro bono միջոցառումներին փաստաբանների սահմանափակ մասնակցությունը ևս ցույց է տալիս, որ խրախուսման գործող գործիքները բավարար չեն համակարգային ներգրավվածություն ապահովելու համար:

Ընդամենը 2 փաստաբան ենք ունեցել, ովքեր գրանցվել և մասնակցել են Փաստաբանների պալատի կողմից կազմակերպված Pro Bono ծառայությունների մատուցման միջոցառմանը:

Ընդ որում, միակ խրախուսումը, որը տրվում է Pro Bono ծառայություններ մատուցող փաստաբաններին, դա վերջիններիս վերապատրաստում անցնելու պարտականություններից ազատելն է, որը ճիշտ չեմ համարում: Նաև Pro Bono ծառայություններ մատուցող անձանց անունները հրապարակվում են կայքում:

Փաստաբանների պալատի ներկայացուցիչ

4.2.5. Ներդրված Pro Bono մեխանիզմի գործնական անհրազործելիությունը.

Չնայած վերոնշյալ նորմատիվ միջավայրին, հարկային փոփոխությունները Pro Bono մեխանիզմը գործնականում դրել են լուրջ սահմանափակումների առաջ: Ըստ էության, ստեղծվել է իրավիճակ, երբ պետությունը մի կողմից՝ ի դեմս Կառավարության որոշումների, «Փաստաբանության մասին» օրենքի և Փաստաբանների պալատի

⁵⁶ ՓՊ 2024 թ. հաշվետվությունները ռազմավարության ծրագրի կատարման և տարեկան գործունեության վերաբերյալ, https://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/2024-.pdf

կարգավորումների, փաստաբանից ակնկալում է սոցիալական պատասխանատվություն և Pro Bono ներգրավվածություն, իսկ մյուս կողմից, հարկային օրենսդրությամբ սահմանափակում է այդ գործունեության իրականացման հնարավորությունը:

Pro Bono գործունեությունը չպետք է դիտարկվի որպես հարկային օրենսդրությամբ սահմանված արտոնությունների (օրինակ՝ 5% հարկային արտոնության) իրացման պարտադիր նախապայման կամ դրա հետ ասոցացվող մեխանիզմ: Նման մոտեցումը հանգեցնում է ինստիտուտի աղավաղմանը, քանի որ փոխարինում է անկախ կամքը՝ հարկային պլանավորման գործընթացով, ինչը չի կարող ապահովել իրավաբանական օգնության պատշաճ որակ և արդյունավետություն:

ՓՊ Կարգի 11-րդ և 12-րդ կետերը պահանջում են կոնկրետ գործողություններ (հայցադիմումներ, բողոքներ, ներկայացուցչություն): Միաժամանակ, ՀՕ-72-Ն օրենքով սահմանված է, որ այդ գործողությունները հարկման չեն ենթարկվում միայն այն դեպքում, եթե չեն գերազանցում 5 տոկոսի շեմը: Արդյունքում, այն փաստաբանը, որը ցանկանում է անվճար աջակցություն տրամադրել ավելի մեծ թվով անապահով անձանց, քան թույլ է տալիս իր ֆինանսական շրջանառությունը, գործնականում հայտնվում է ընտրության առաջ՝ կա՛մ չհաշվառել այդ ծառայությունը որպես pro bono, կա՛մ մերժել աջակցության տրամադրումը՝ «քվոտան» լրացված լինելու պատճառաբանությամբ:

Պրակտիկայում դա շատ բարդ է իրականացնել: Այս տարվա մեջ անվճար գործեր չունեն դատարան ներկայացրած, եթե նույնիսկ կան, դրանք նախորդ տարվա գործերն են: Եթե ես գտնեմ, որ քաղաքացին ունի իմ անվճար օգնության կարիքը այդ դեպքում չեմ նայի դա իմ Pro Bono գործերի 5 տոկոսն է, թե 15: Եթե զան և որոշեն տուգանել ես, որպես փաստաբան, կպաշտպանեմ իմ իրավունքները:

Փաստաբան

Պաշտպանության իրավունքի գերակայության ապահովմամբ պայմանավորված՝ Pro Bono ծառայություններն առանձին ուղղություններով շարունակում եմ մատուցել: Ամեն դեպքում, խիստ խնդրահարույց եմ համարում Pro Bono ծառայությունների մատուցման համար սահմանված 5 տոկոսի շեմը: Այն չունի որևէ հիմնավորում, դժվար հաշվարկելի է, հստակ չէ դրա կիրառման հնարավորությունը:

Փաստացի Կառավարության հայտարարած նպատակը չի համընկնում պետության հետագա գործնական քայլերի հետ: Մի կողմից՝ անվճար իրավաբանական օգնության կարիք ունեցող անձանց շրջանակը ընդլայնվել է, մյուս կողմից՝ համարժեք ձևով չեն ավելացվել հանրային պաշտպանների հաստիքները և չի ապահովվել համակարգի ինստիտուցիոնալ հզորացումը: Ավելին, սահմանվել է այնպիսի հարկային ռեժիմ, որը գործնականում ոչ թե խրախուսում, այլ սահմանափակում է նույն այդ շահառու խմբերին անվճար աջակցություն ցուցաբերելու փաստաբանների հնարավորությունը: Հետևաբար, ձևավորվում է ներքին հակասություն պետության քաղաքականության մեջ. պետությունը նորմատիվ մակարդակում ընդլայնում է անվճար օգնության իրավունքի սուբյեկտների շրջանակը և հայտարարում Pro Bono մեխանիզմի խրախուսման անհրաժեշտության մասին՝ այդ մասով կատարված համարելով նաև Ռազմավարությամբ նախատեսված գործողությունները,⁵⁷ սակայն հարկային քաղաքականությամբ փաստացի նվազեցնում է այդ իրավունքի իրացման իրական հնարավորությունները:

Սահմանադրական դատարանը 2025 թվականի հունիսի 10-ի ՍԴԱՌ-9 որոշմամբ 5% բացառության ներդրումը դիտարկել է որպես վիճարկվող սահմանադրաիրավական հարցը սպառող հանգամանք: Ըստ այդ կարգավորման՝ փաստաբանների կողմից մատուցվող անվճար ծառայությունների ԱԱՀ-ի հարկման բազան նվազեցվում է, եթե այն չի գերազանցում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի բոլոր գործարքների հարկման բազայի 5%-ը: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ այդ բացառության գոյությունն ինքնին դեռևս չի վկայում դրա գործնական արդյունավետության մասին: Այսպես, օրինակ, ՓՊ Կարգի 13-րդ կետը փաստաբանական կազմակերպությունների համար սահմանում է կրկնակի չափով բաղադրիչներ (եթե ունեն 4-ից ավելի փաստաբան), ինչը նշանակում է, որ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել փաստաբանական գործունեության կառուցվածքային բազմազանությունը: Մարդու իրավունքների պաշտպանության կամ հանրային շահի գործերով մասնագիտացած որոշ փոքր կամ միջին գրասենյակների համար pro bono կամ ցածր վճարով գործերի ծավալը կարող է եսկան լինել և 5% շեմը գործնականում կարող է չարտացոլել նրանց գործունեության իրական կառուցվածքը: Այս ամենը ցույց է տալիս, որ պետությունը սեփական սոցիալական

⁵⁷ Արդարադատության նախարարության Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության կատարման մշտադիտարկման հարթակ, <https://www.datairav.am/action/479/detail>

պարտավորությունները մի կողմից փորձում է դնել փաստաբանների վրա, բայց միաժամանակ հարկում է այդ բեռը կրելու համար:

Միևնույն ժամանակ 5% արտոնության շեմը գործնականում ստեղծում է անորոշություն: Ըստ հարցազրույցի արդյունքների՝ Փաստաբանական գրասենյակները չեն կարող տարվա սկզբին կանխատեսել, թե տարվա վերջին ինչ շրջանառություն կունենան, որպեսզի հաշվարկեն Pro Bono գործերի 5%-ի սահմանը:

Դատական գործերով հնարավոր է չափել, բայց քննչական գործողությունների դեպքում դժվար է:

Փաստաբան

Օրինակ՝ մի գործի համար 2 մլն դրամ գումար ենք վերցրել և հարկեր վճարել, որի պարագայում դատարանը պետք է հատուցի 400 հազար դրամ: Հիմա անվճար խորհրդատվության դեպքում հետաքրքիր է՝ ո՞նց են հաշվելու՝ ինչպես դատարաններն են հատուցում, թե մեր պայմանագրերին համարժեք:

Փաստաբան

Սահմանվել են 5% արտոնության կիրառման այնպիսի չափանիշներ (հաշվետու ժամանակաշրջանը մեկ ամիս է), որոնք գործառնական/ կազմակերպչական առումով գրեթե անիրականանալի են (օրինակ՝ պարզ չէ, թե ինչպես պետք է փաստաբանը իր կողմից կատարված Pro Bono աշխատանքը (օրինակ՝ 1 անձի համար 6-7 ժամում կազմված բողոքը, որը բխում է Պալատի վերոնշյալ պահանջներից) գործնականում համադրի մեկամսյա հաշվետու ժամանակահատվածում իր ընդհանուր գործերի 5 տոկոսի շեմի հետ՝ առանց ռիսկի, որ տվյալ ամսում կգերազանցի սահմանված չափը և արդյունքում պարտավոր կլինի այդ մասով հարկ վճարել):

Ես ինչպե՞ս հաշվարկեմ՝ այդ 5 տոկոսը որ ամսին է վերաբերում: Ենթադրենք նախորդ ամիս տրամադրել եմ 2 մլն դրամի չափով իրավաբանական օգնություն: Ես նախորդ ամսի՞ն էի օգտվելու արտոնությունից, թե՞ այս ամիս կարող եմ օգտվել: Կամ՝

ն՞վ և ինչպե՞ս է հաշվարկելու անվճար գործի արժեքը: Կամ ենթադրենք ես երիտասարդ փաստաբան եմ, ով նոր է սկսում գործունեություն ծավալել, ու անվճար գործունեություն եմ ուզում ծավալել, որ մարդիկ ինձ ճանաչեն, փորձ ձեռք բերեմ, և այլն, պետությունը ստիպում է, ենթադրենք՝ 20 գործով վճարովի ծառայություն մատուցեմ, որ կարողանամ 1 գործ անվճար վարել:

Փաստաբանների պալատի ներկայացուցիչ

Առցանց հարցմանը մասնակցած փաստաբանները արձանագրել են Pro Bono ծառայությունների մատուցման անկում: Փաստաբանների ավելի քան 70%-ը (47 փաստաբան) նշել է, որ անվճար աշխատանքի ծավալը կրճատվել է առնվազն կիսով չափ (50% և ավելի): Եվս 9 տոկոսը գտել է, որ ծառայությունների ծավալը նվազել է 30%-ով: Սա ևս վկայում է այն մասին, որ 5% արտոնության շեմը գործնականում չի խրախուսում անվճար օգնությունը:

Pro Bono համակարգի գործնական կիրառելիության ամենախոսուն ցուցիչը 2025 թ. ԱԱՀ-ի հաշվարկների վերլուծությունն է: Ըստ ՊԵԿ-ից ստացված տվյալների՝ ԱԱՀ-ի հաշվարկի 20-րդ կետում («Օրենսգրքով սահմանված այլ հիմքերով պակասեցում»), որը ներառում է նաև անվճար իրավաբանական օգնության մասով ԱԱՀ-ի բազայի նվազեցումը, նշագրում կատարած հարկ վճարողների քանակը ծայրահեղ ցածր է:

Այսպես՝ 2025թ. 1-12 ամիսների ընթացքում՝ նշված հնարավորությունից օգտվել է 1 ԱՁ, 3 ՍՊԸ և 4 ՓԲԸ:⁵⁸ Այն իրողությունը, որ 2025 թվականի ամբողջ տարվա ընթացքում (1-12 ամիսներ) ՀՀ-ում գործող 1738 ԱԱՀ վճարող սուբյեկտներից նշված հնարավորությունից (անվճար իրավաբանական օգնության մասով ԱԱՀ բազայի նվազեցումից) օգտվել է ընդամենը 1 ԱՁ, 3 ՍՊԸ և 4 ՓԲԸ, փաստացի նշանակում է, որ արտոնության գործնական կիրառելիության ցուցիչը հավասար է 0.46%-ի:

Հետևաբար, ՊԵԿ պաշտոնական վիճակագրությունը փաստում է, որ պետությունը նորմատիվ մակարդակում հռչակել է արտոնություն, սակայն գործնական մակարդակում այն կիրառելի չի եղել:

⁵⁸ Հավելված 3՝ ՊԵԿ գրությունը՝ 2025թ-ի ԱԱՀ-ի հաշվարկների 20-րդ կետում «Օրենսգրքով սահմանված այլ հիմք» նշագրումով «[Բ]. Պակասեցում» նշած և M69.10.0 գործունեության տեսակ հայտարարագրած հարկ վճարողների քանակի վերաբերյալ:

4.2.6. Հարկային բեռի հետևանքները՝ գործերի մերժում, խոցելի խմբերի պաշտպանության սահմանափակում և ՀՊԳ-ի բեռի աճ.

Հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ Pro Bono ծառայությունների հարկումը ուղղակիորեն անդրադառնում է փաստաբանների վարքագծի վրա: Որոշ փաստաբաններ նշել են, որ սկսել են խուսափել նոր անվճար գործեր վերցնելուց, այդ թվում՝ պատասխանատվության ենթարկվելու մտահոգությամբ պայմանավորված: Մյուս մասն էլ նշել է, որ պատրաստ են պայքարել իրենց իրավունքների համար, եթե տուգանվեն անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու համար:

Pro Bono ծառայություններ «վախով» ենք մատուցում անգամ բարեկամներին:

Փաստաբան

Որպես փաստաբան խուսափում եմ պրո-բոնո գործերից:

Փաստաբան

Մյուս կողմից, հարցվածները նշել են, որ նախկինում հնարավոր էր որոշակի մասնագիտական կամ հանրային հետաքրքրություն ներկայացնող գործերը կատարել անվճար կամ սիմվոլիկ վճարումով, սակայն ԱԱՀ ռեժիմին անցնելուց և անվճար իրավաբանական օգնության հարկման հետ կապված փոփոխություններից հետո հաճախ ստիպված են լինում մերժել նման գործերը:

Շատ գործեր ստիպված ենք լինում մերժել՝ անձանց անվճարունակ լինելու դեպքում, քանի որ այդ պարագայում ստիպված ենք լինելու այդ գործի համար հարկ վճարել՝ առանց որևէ վարձատրություն ստանալու: Շատ դեպքերում տուժում է իրավունքի զարգացումը, քանի որ իրավական հետաքրքրություն ունեցող գործերը հաճախ կապված են լինում հենց անվճարունակ անձանց իրավունքների հետ:

Փաստաբան

Հետազոտության շրջանակներում հարցվածները նշել են, որ փոփոխություններից տուժել են ոչ միայն օրենքով սահմանված նեղ խոցելի խմբերը, այլև ցածր և նույնիսկ միջին եկամուտ ունեցող անձինք, որոնք գործնականում ի վիճակի չեն վճարել փաստաբանական ծառայությունների համար: Հարցվածների գնահատմամբ՝ հաշվի առնելով քրեական

դատավարության օրենսգրքի փոփոխությունները, որի համաձայն նաև տուժողների ներկայացուցիչ կարող է լինել փաստաբանը՝ իրավունքների պաշտպանության համատեքստում քաղաքականության փոփոխությունը նաև էական ազդեցություն ունի հանցագործություններից տուժած անձանց վրա, որոնք ոչ բոլոր գործերով ունեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Ըստ հարցազրույցների արդյունքների՝ Pro Bono ծառայությունների հարկումը ուղղակիորեն ազդում է հատկապես խոցելի խմբերի վրա, այդ թվում՝ խոշտանգումներից զոհերի պաշտպանության արդյունավետության վրա:

Ի պատասխան ՀՀ դատարաններ ուղարկված հարցումների՝ որոշ դատարաններ, օրինակ՝ Վարչական դատարանը, հայտնել են, որ դատավորներն արձանագրել են դեպքեր, երբ 2025թ. փոփոխություններից հետո հայցվորները հայտարարել են, որ նրանց ներկայացուցիչը այլևս չի կարող շարունակել ծառայություններ մատուցել գործով, քանի որ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելը հնարավոր չէ:⁵⁹

4.2.7. Արտոնության շահառուների նեղ շրջանակը և մեխանիզմի սահմանափակ գործնական արժեքը.

Հատկանշական է նաև, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում և խրախուսվում է փաստաբանների կողմից Pro Bono ծառայությունների մատուցումը միայն հստակ խումբ անձանց, օրինակ՝ օրենքով սահմանված կարգով հաստատված՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց, դատապարտյալներին, նպաստառուներին և սոցիալապես անապահով անձանց, ընտանեկան բռնության զոհերին, խոշտանգման զոհերին, ապաստան հայցողներին և այլն⁶⁰:

Միևնույն ժամանակ, եթե Pro Bono ծառայությունների կազմակերպումը դիտարկվում է որպես համակարգային մեխանիզմ՝ Փաստաբանների պալատի կամ Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով, ապա նման սահմանափակ շահառուների շրջանակը էապես նեղացնում է այդ գործիքի կիրառման հնարավորությունները: Արդյունքում, Pro Bono ինստիտուտը չի կարող լիարժեք հանդես գալ որպես անվճար իրավաբանական օգնության համակարգը բեռնաթափող և փոխլրացնող գործիք, քանի որ այն չի ընդգրկում

⁵⁹ Վարչական դատարան ուղարկված Ե22-25.03.2026թ. հարցման պատասխանը Վարչական դատարանից:

⁶⁰ Ամբողջական ցանկը տե՛ս՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 41, մաս 5:

այն բազմաթիվ անձանց, որոնք փաստացի կարիք ունեն իրավաբանական աջակցության, սակայն դուրս են մնում օրենքով սահմանված այս նեղ շրջանակից:

Ավելին, *Pro Bono* ծառայության էության համար հիմնարար է կամավորության սկզբունքը: Անհրաժեշտ է հստակեցնել, որ փաստաբանը պետք է ունենա գործի ընտրության լիարժեք ազատություն՝ ինքնուրույն որոշելու համար, թե որ դեպքերում է նպատակահարմար իրացնել իր ժամանակային և մասնագիտական ռեսուրսները:

Խնդիրը սրվում է նաև այն պատճառով, որ գործող օրենսդրական շրջանակը բավարար չափով լայն չէ և չի ներառում մի շարք անձանց, որոնք գործնականում ունեն իրավաբանական օգնության կարիք, սակայն չեն համապատասխանում օրենքով սահմանված շահառուի չափանիշներին:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված միայն 21 խումբ անձինք ունեն անվճար օգնության իրավունք: Սակայն Հայաստանում մեծ թիվ են կազմում այն անձինք, ովքեր թեև չեն համապատասխանում վերը նշված չափանիշներին, սակայն նաև չեն կարող վճարել փաստաբանի ծառայությունների համար, հատկապես՝ փաստաբանական ծառայությունների արժեքների բարձրացման պայմաններում:

Օրինակ՝ անվճար իրավաբանական օգնության համակարգից կարող են դուրս մնալ այն անձինք, որոնք դիմել են կենսաթոշակի նշանակման կամ վերահաշվարկի համար և մերժվել են, սակայն չեն համարվում սոցիալապես անապահով կամ միայնակ չեն: Նույնը վերաբերում է այն անձանց, ում նկատմամբ չի սահմանվել հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խումբ, և որոնք ցանկանում են բողոքարկել այդ որոշումը, սակայն չեն բավարարում գործող սոցիալական չափանիշները: Գործնական խնդիրներ են առաջանում նաև այն դեպքերում, երբ անձը ընդհանուր առմամբ համապատասխանում է շահառուի կարգավիճակին, սակայն կոնկրետ դրամական պահանջի չափը գերազանցում է օրենքով սահմանված շեմը, ինչի հետևանքով նա դուրս է մնում անվճար իրավաբանական օգնության շրջանակից:

Բացի այդ, փոփոխությունների պատճառով տուժում են նաև անձինք, ովքեր իրենց իրավունքների պաշտպանության նպատակով ցանկանում են դիմել միջազգային մարմիններին: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք: Հանրային պաշտպանի գրասենյակը, սակայն,

չի զբաղվում Մարդու իրավունքների եվրոպական դատարան գանգատների ներկայացմամբ և չի աջակցում անձանց՝ նշված խումբ հարցերով, այս անձինք չեն հանդիսանում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Pro Bono ծառայություններից օգտվելու հնարավորություն ունեցող շահառուներ, հետևաբար նշված խումբ անձանց սահմանադրական իրավունքը՝ դիմել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին, խոչընդոտվում է այն իմաստով, որ մասնավոր փաստաբանների կողմից վերջիններիս անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերելու իրավական հնարավորությունը սահմանափակված է:

Այս իրավիճակը ցույց է տալիս, որ կամավոր անհատույց իրավաբանական օգնության շահառուների շրջանակը պետք է ընդլայնվի: Այն պետք է վերանայվի և սահմանված չափանիշները պետք է ներառեն մարդու իրավունքների պաշտպանության, անձանց խոցելիության, գործի հանրային կամ ռազմավարական նշանակության և իրավական պաշտպանության իրական անհրաժեշտության տեսանկյունից անհրաժեշտ խմբեր ևս: Այդ շրջանակի վերջնական սահմանումը նպատակահարմար է իրականացնել ՀՀ փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների, իրավաբանական կլինիկաների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Մենք չենք սահմանափակում մեր փաստաբաններին գործերի ընտրության հարցում: Միգուցե լինեն քաղաքացիներ, ովքեր չեն ընկնում հանրային պաշտպանի գրասենյակի կրիտերիաների մեջ, օրինակ՝ ստացել են ժառանգություն: Պատերազմի մասնակիցներին ենք անվճար խորհրդատվություն տրամադրել, ծանոթներին: Ոլորտը էնպիսին է, որ դա ոչ միայն իրավունք, այլև պարտականություն է փաստաբանի համար:

Փաստաբան

Այսպիսով, Pro Bono մեխանիզմի ներկայիս կառուցվածքը չի լուծում այն լայն սոցիալական խնդիրը, որի համար այն ռազմավարական մակարդակում դիտարկվել էր որպես լրացուցիչ աջակցող միջոց:

4.2.8. Միջազգային չափանիշների հետ անհամապատասխանությունը.

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» Rec(2000)21 հանձնարարականի 4-րդ սկզբունքի 2-րդ կետին համապատասխան՝ փաստաբաններին պետք է խրախուսել տնտեսապես անապահով դրության մեջ գտնվող անձանց իրավաբանական ծառայություններ մատուցելու համար, իսկ նույն հանձնարարականի 5-րդ սկզբունքի 4-րդ մասի «c» կետի համաձայն՝ հարկավոր է խրախուսել փաստաբանների մասնակցությունը տնտեսապես անապահով դրության մեջ գտնվող անձանց արդարադատության մատչելիությունը երաշխավորող ծրագրերին, մասնավորապես՝ իրավաբանական օգնություն և խորհրդատվություն տրամադրելու միջոցով: Պետությունը, հաշվի առնելով նաև, որ իրավաբանական օգնությունը տրամադրվում է կամավոր և անվճար հիմունքներով, պետք է խրախուսի հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների կողմից անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրումը: Պետությունը փաստաբանական ծառայությունների մատուցման ոլորտում հարկային քաղաքականությունը մշակելիս որպես ուղենիշ պետք է ընդունի կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու համար բարենպաստ պայմանների ստեղծումն ու համապատասխան գործունեության խրախուսումը՝ ներդնելով համապատասխան կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:⁶¹

Միացյալ ազգերի կազմակերպության Խոշտանգումների դեմ կոմիտեն 2025 թվականի ապրիլին Հայաստանի Հանրապետության հինգերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում հայտնել է, որ «նոր քրեական օրենսգրքերի ընդունումից հետո փաստաբանների համար ավելի է դժվարացել դատական վարույթներում խոշտանգումների ենթադրյալ զոհերին օգնություն ցուցաբերելը՝ կիրառվող հարկերի պատճառով, և հարցեր է բարձրացրել՝ արդյո՞ք սա ճիշտ է և արդյո՞ք Հայաստանը քայլեր կձեռնարկի ոստիկանության դեմ ուղղված բողոքների առավել արագ և արդյունավետ քննությունն ապահովելու համար: **Հատկանշական է նաև, որ ՀՀ պատվիրակությունն արձագանքել է, որ աշխատանքներ են տարվում ապահովելու համար, որ անվճար (Pro Bono) ծառայություն մատուցող փաստաբաններն ազատվեն հարկերից**»:

⁶¹ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման ազատության մասին» 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ Rec(2000)21 հանձնարարական, <https://www.icj.org/wp-content/uploads/2014/10/CoE-rec200021-freedom-exercise-profession-lawyer.pdf>

⁶² ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ, «Խոշտանգումների դեմ կոմիտեի փորձագետները բարձր են գնահատել Հայաստանի կողմից բանտերում առկա խնդիրների նախաձեռնողական հասցեագրումը, ինչպես նաև հարցեր են բարձրացրել ոստիկանության կողմից ուժի անհամաչափ կիրառման համար հաշվետվողականության ապահովման և բանտերում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի

Փաստաբանների նկատմամբ կիրառվող հարկային ռեժիմին անդրադարձել է նաև Եվրոպայի փաստաբանների և իրավաբանական միությունների խորհուրդը (CCBE)-ն, որը 2025 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ կառավարությանն ուղղված նամակով անընդունելի է համարել ՀՀ-ում փաստաբանների աշխատանքի վրա ազդող օրենսդրական փոփոխությունների ընդունումը՝ առանց Փաստաբանների պալատի հետ բովանդակալից խորհրդակցությունների:⁶³

Այս ամենը վկայում է, որ Հայաստանում Pro Bono ծառայությունների նկատմամբ կիրառվող հարկային ռեժիմը հակասում է թե՛ ներպետական ռազմավարական նպատակներին, թե՛ միջազգային չափանիշներին, որոնք պահանջում են նման գործունեության խրախուսում, այլ ոչ սահմանափակում:

4.2.9. Անվճար իրավաբանական օգնություն ցուցաբերող այլ սուբյեկտների խնդիրները.

Հայաստանում հասարակական կազմակերպությունները, մասնավոր անհատները, իրավաբանական կլինիկաները, փաստաբանական գրասենյակները լրացնում են անվճար իրավաբանական օգնության համակարգի բացերը (ընդ որում, վերջիններս անվճար աջակցություն ցուցաբերում են ինչպես հանրային պաշտպանին դիմելու համար սահմանված չափանիշներին բավարարող, այնպես էլ չբավարարող անձանց):

Այսպես, օրինակ, ՀՀ-ում անվճար իրավաբանական աջակցություն են ցուցաբերում ԵՊՀ իրավաբանական կլինիկան, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական կլինիկան⁶⁴, Եվրասիա միջազգային համալսարանի իրավաբանական կլինիկան⁶⁵: Այսպես, օրինակ 2022-2023 թվականների ընթացքում Երևանի պետական համալսարանի իրավաբանական կլինիկայի կողմից իրավաբանական ծառայություններ են ստացել 159 անձինք:⁶⁶ Կլինիկաները գործում են հիմնականում Երևանում

վերաբերյալ», 16 ապրիլի 2025 թ., <https://www.ohchr.org/en/meeting-summaries/2025/04/experts-committee-against-torture-commend-armenia-proactively-addressing>

⁶³ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավաբանական ընկերակցությունների խորհուրդ (CCBE), նամակ ՀՀ վարչապետին և ՀՀ արդարադատության նախարարին՝ պետական երաշխավորված իրավաբանական օգնության և փաստաբանական ծառայությունների հարկային բեռի վերաբերյալ, 4 նոյեմբերի 2025 թ., https://advocates.am/images/CCBE_letter_Armenia_-_2025.pdf

⁶⁴ Հայաստանում ֆրանսիական համալսարան (UFAR), «Անվճար իրավաբանական խորհրդատվություն Արմավիրի մարզում», Facebook գրառում, 26 մարտի 2025 թ., <https://www.facebook.com/ufarofficial/posts/pfbid02p5teZfDYrnZb3235gubNfCo5Sv1nGUttHZWqMVks2DvqkHwCsB7BRyhbyW9pxGNl?rdid=U7iYyTk6CuNKmqCE#>

⁶⁵ Եվրասիա միջազգային համալսարան, «Իրավաբանական կլինիկա», <https://eiu.am/hy/hy-legal-clinic/>

⁶⁶ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդ, «Արձանագրություն թիվ 11», 10 հուլիսի 2023 թ., <http://documentation.ysu.am/wp-content/uploads/2023/07/Protocol-N-11-10.07.2023.pdf>

(Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական կլինիկան գործում է նաև Հրազդանում)⁶⁷, խորհրդատվություն տրամադրվում է ուսանողների կողմից՝ դասախոսների ընդհանուր ղեկավարությամբ: Անհրաժեշտության դեպքում կազմվում են դատական փաստաթղթեր, սակայն դատական ներկայացուցչություն չի իրականացվում:

Իրավաբանական կլինիկաները կարևոր լրացուցիչ մեխանիզմ են, սակայն չեն կարող փոխարինել փաստաբանական մասնագիտական աջակցությանը: Դրանք հիմնականում ապահովում են առաջնային խորհրդատվություն, իրավական կողմնորոշում և որոշ փաստաթղթերի պատրաստման աջակցություն, մինչդեռ խոցելի անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությունը հաճախ պահանջում է շարունակական և մասնագիտական դատական ներկայացուցչություն:

Անվճար իրավաբանական օգնության ամենամեծ բաժինը ցուցաբերում են հասարակական կազմակերպությունները, որոնց ռեսուրսները սովորաբար սահմանափակ են (մարդկային և ֆինանսական ռեսուրսների, տարածքային ընդգրկման, ինչպես նաև անձանց շրջանակով և իրավաբանների մասնագիտացման բերումով):

Արդյունքում հասարակական կազմակերպությունները հաճախ իրենց վրա են վերցնում իրավաբանական աջակցություն ցուցաբերելու բեռ, որը մասամբ համապատասխանում է նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Pro Bono ծառայություններին և այն անձանց շրջանակին, ում ենթակա է տրամադրման այդ օգնությունը:

Միաժամանակ, ֆինանսական անկայունության պայմաններում հասարակական կազմակերպությունների կողմից անվճար մատուցվող ծառայությունները խոցելի են: ՀԿ-ների կողմից իրավաբանական ծառայություններ մատուցվում են կամ կազմակերպության աշխատակից հանդիսացող իրավաբանների, կամ ծառայությունների մատուցման հիման վրա ներգրավված փաստաբանների միջոցով:

Ստացվեց, որ տուժեցին իրավապաշտպան ոլորտի ներկայացուցիչները: Պետք է մեխանիզմներ բացահայտել, որը կպարզի օլիգարխիկ խմբերի ներկայացուցիչներին, և չեն տուժի իրավապաշտպանները: Պետությունը պետք է փորձի սուբսիդավորել անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող մասնագետներին, որ հույսը չմնա

⁶⁷ UFAR - Հայաստանում ֆրանսիական համալսարան, «Անվճար իրավաբանական հանդիպում և խորհրդատվություն Հրազդանում», Facebook գրառում, 9 մարտի 2025 թ., <https://www.facebook.com/ufarofficial/posts/pfbid041B6dTf256nQ6uFHsH3Yv18oyRVcDyAtha1wSx829VoE64oQTQFMvX6BsDZnwWfal?rdid=96nhMT0yoiOU4tGI#>

միայն ՀԿ-ի վրա: Ստացվում է, որ պետությունը չունի մեխանիզմ, որով հասանելի կդարձնի բոլոր ծառայությունները խոցելի խմբերի համար: Հիմա ստացվում է, որ նաև մեզ են խանգարում օգնություն տրամադրել:

ՀԿ ներկայացուցիչ

Այս փոփոխությունների անմիջական հետևանքը եղել է այն, որ իրավաբանական ծառայություններ մատուցող սուբյեկտները սկսել են սահմանափակել անվճար գործերի ծավալը: Ըստ հարցազրույցի մասնակիցների՝ ՀԿ-ները ստիպված են ավելի խիստ «ֆիլտրել» գործերը՝ հրաժարվելով այն դեպքերից, որոնք պահանջում են մեծ ռեսուրսներ կամ ունեն ցածր հաջողության հավանականություն:

4.2.10. Ծանրաբեռնվածության վերադարձը Հանրային պաշտպանի գրասենյակին.

Այս պայմաններում անվճար իրավաբանական օգնության իրական ծանրաբեռնվածությունը կրկին կենտրոնանում է Հանրային պաշտպանի գրասենյակի վրա: Սակայն, ինչպես արդեն ցույց է տրվել նախորդ ենթագլուխներում, ՀՊԳ-ն ինքնին գերծանրաբեռնված է և չունի բավարար ինստիտուցիոնալ կարողություններ՝ ամբողջությամբ փոխհատուցելու այն բացը, որն առաջանում է այլ փաստաբանների Pro Bono ներգրավվածության սահմանափակման հետևանքով: Հետևաբար, Pro Bono մեխանիզմի հարկային սահմանափակումը ոչ միայն նվազեցնում է մասնավոր փաստաբանների կողմից անվճար աջակցության մատուցումը, այլ նաև խորացնում է ՀՊԳ-ի արդեն իսկ առկա բեռը:

Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ ռազմավարության մեջ նշված է, որ անվճար իրավաբանական օգնությունը պետք է կատարելագործվի, բայց հանրային պաշտպանների թիվն էլ չի ավելանում: Ֆրանսիայում փաստաբանների նույնիսկ տուգանում են անվճար օգնության որոշակի շեմ չտրամադրելու համար:

Փաստաբան

Միննույն ժամանակ, օրենսդրական փոփոխություններով ընդլայնվել է հանրային պաշտպանների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության շրջանակը, մյուս կողմից՝ հարկային նոր քաղաքականությունը սահմանափակել է այլընտրանքային

(մասնավոր) անվճար իրավաբանական օգնության ռեսուրսները՝ Հանրային պաշտպանի գրասենյակի վրա թողնելով անհամաչափ բեռ:

Այս պայմաններում անվճար իրավաբանական օգնության պահանջարկի զգալի մասը կրկին ուղղվում է Հանրային պաշտպանի գրասենյակին:

Այսինքն՝ հակառակ Կառավարության կողմից նախատեսված 30% թեթևացմանը, ՀՊԳ բեռը միայն աճել է: Մինևույն ժամանակ, Pro Bono ծառայությունների մասով սահմանված օրենսդրական երաշխիքները մեծամասամբ մնացել են ձևական՝ զուտ նորմատիվ մակարդակում, քանի որ դրանց արդյունավետ իրացման համար անհրաժեշտ գործնական, կազմակերպական և հարկային նախադրյալները օրենսդիրը չի ապահովել:

4.2.11. Արդարադատության մատչելիության այլ զուգահեռ խոչընդոտները.

Անվճար իրավաբանական օգնության պահանջարկի աճը պայմանավորված չէ միայն փաստաբանական ծառայությունների հարկային բեռի ավելացմամբ:

Հարկային փոփոխությունների ազդեցությունն ավելի է խորանում այլ զուգահեռ համակարգային փոփոխությունների պայմաններում: Դրանց թվում են դատարան դիմելու պետական տուրքերի աճը, դատարանների մի շարք նստավայրերի փակումը և դատավարական ընթացակարգերի թվայնացումը: Այս գործոնների համակցությամբ արդարադատությունը դառնում է ոչ միայն ավելի թանկ, այլև ֆիզիկապես և տեխնիկապես պակաս հասանելի, հատկապես խոցելի խմբերի և մարզային բնակչության համար:

Այսպես, օրինակ, 19.04.2021թ.-ին «Պետական տուրքի մասին» օրենքում կատարվեցին կտրուկ փոփոխություններ, որոնց արդյունքում անհամեմատ բարձրացավ դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքերի չափը⁶⁸: Հարցազրույցները փաստում են, որ նույնիսկ անվճար փաստաբան ունենալու դեպքում, 20,000-ից 60,000 դրամ տուրքը խոցելի խմբերի համար դատարանը դարձնում է ոչ մատչելի:

Զուգահեռ, 2024-2025թթ ՀՀ-ում աստիճանաբար փակվեցին դատարանների Աշոցքի, Տաշիրի, Թալինի, Արթիկի, Մարտունու, Վեդու, Եղեգնաձորի, Սիսիանի և Մեղրիի նստավայրերը⁶⁹: Հարկային բեռի ավելացումը (ինչի պատճառով փաստաբանական ծառայությունների արժեքներն անհամեմատ բարձրացել են) և դատարանների

⁶⁸ ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ընդունված՝ 19 ապրիլի 2021 թ., <https://www.arlis.am/hy/acts/152129>

⁶⁹ Բարձրագույն դատական խորհուրդ, «Հայաստանի 51 դատական նստավայրերից 9-ը կփակվեն», Facebook գրառում, 23 հունվարի 2024 թ., https://www.facebook.com/story.php?story_fbid=686617263659173&id=100069327154682&mibextid=wwXlfr&rid=xySDgEMieNF8LMdL#

նատավայրերի փակումը (ինչի պատճառով որոշ տարածքներում դատարան հասնելը դարձել է ավելի դժվար) միասին ձևավորում են իրավիճակ, երբ անձի համար արդարադատությունը դառնում է ոչ մատչելի ոչ միայն փաստաբանի վարձավճարի, այլև ֆիզիկական և լոգիստիկ պատճառներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում 2023 թվականի դեկտեմբերին կատարված փոփոխության ուժով՝ 2024 թվականի փետրվարի 1-ից ՀՀ դատարաններում նոր մուտքագրվող քաղաքացիական գործերն ամբողջությամբ սկսեց վարվել էլեկտրոնային եղանակով⁷⁰:

«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-12-Ն օրենքով սահմանված էլեկտրոնային համակարգը (այսուհետ՝ Համակարգ) 2025 թվականի օգոստոսից գործարկվեց <https://e-administrativecourt.am> ինտերնետային կայքի հասցեով⁷¹:

Հատկանշական է, որ անմատչելի են նաև վեճերի լուծման կամ իրավունքների ապահովման արտադատական մեխանիզմները: Օրինակ, նոտարների կողմից ծառայությունների մատուցման արժեքները ևս բարձր են, հարկային բեռի փոփոխությունները ազդել են նաև վերջիններիս վրա: Նոտարները հաճախ չեն իրականացնում օրենքով սահմանված գործառույթը՝ պատճառաբանելով, որ այն բարդ է, և անձին ուղղորդելով դատարան:

Անձանց իրավական աջակցություն և արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու իրավունքները ներկայումս բախվում են մի շարք զուգահեռ արգելքների, որոնք արդարադատությունը դարձնում են ֆինանսապես և ֆիզիկապես անհասանելի:

Այսպիսով, ի լրումն փաստաբանական ծառայությունների հարկային բեռի ավելացման և դրանից բխող՝ ծառայությունների արժեքի բարձրացման՝ պետությունը բարդացրել է դատարան դիմելու ընթացակարգերը, բարձրացրել է տուրքերն ու հարկերը, սակայն միաժամանակ թուլացրել է անվճար իրավաբանական օգնության կառուցակարգը: Սա հանգեցնում է գործնականում խախտված իրավունքների վերականգնման բարդությունների, շատ դեպքերում՝ անհնարինության:

⁷⁰ Բարձրագույն դատական խորհուրդ, Իրազեկում ՀՀ դատարաններում էլեկտրոնային համակարգի գործարկման մասին, 31.01.2024թ. <https://www.court.am/hy/news/1700>

⁷¹ Բարձրագույն դատական խորհուրդ, Հայտարարություն էլեկտրոնային համակարգի գործարկման մասին, 15.08.2025թ. <https://court.am/hy/news/1936>

ԱՄՓՈՓՈՒՄ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացված սույն հետազոտությունը նպատակ ունի համակողմանիորեն գնահատել Հայաստանի Հանրապետությունում արդարադատության մատչելիության և որակյալ իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքների իրացման վիճակը՝ 2025 թվականի հունվարի 1-ից փաստաբանական ծառայությունների հարկային բեռի կտրուկ ավելացման և հարակից համակարգային փոփոխությունների համատեքստում:

Հետազոտությունն անդրադառնում է 2025 թվականի դրությամբ ձևավորված իրավիճակին՝ հարկային նոր քաղաքականության ուժի մեջ մտնելուց հետո դրա իրավական, ինստիտուցիոնալ և գործնական հետևանքների գնահատման նպատակով: Հետազոտության շրջանակում համադրվել են իրավական ակտերի վերլուծությունը, պաշտոնական վիճակագրական տվյալները, պետական մարմիններից ստացված տեղեկությունները, փաստաբանների շրջանում անցկացված առցանց հարցման արդյունքները, ինչպես նաև ոլորտի մասնագետների և փորձագետների հետ իրականացված խորքային հարցազրույցները: Այս մեթոդաբանությունը հնարավորություն է տվել ոչ միայն արձանագրել օրենսդրական փոփոխությունների ֆորմալ բովանդակությունը, այլև գնահատել դրանց գործնական ազդեցությունը փաստաբանական ծառայությունների մատչելիության, անվճար իրավաբանական օգնության տրամադրման և դատական պաշտպանության իրական հասանելիության վրա:

2024 թվականի հունիսի 12-ին ընդունված ՀՕ-285-Ն օրենքով՝ 2025 թվականի հունվարի 1-ից փաստաբանական ծառայությունները դուրս մղվեցին շրջանառության հարկի (5%) արտոնյալ համակարգից, ինչի արդյունքում փաստաբանական ծառայություն մատուցողները անցան հարկման ընդհանուր համակարգ՝ 20% ԱԱՀ-ի և շահութահարկի ընդհանուր կանոնների կիրառմամբ: Պետական քաղաքականության մակարդակում օրենսդրական այս փոփոխությունը ներկայացվել է որպես հարկման տարբեր համակարգերի միջև հարկային բեռի հավասարեցման և ծախսերի փաստաթղթավորման խթանման միջոց:

Սակայն ըստ հետազոտության արդյունքների՝ փաստաբանական գործունեությունը, ի տարբերություն սովորական առևտրային կամ ծառայությունների մատուցման այլ ոլորտների, ուղղակիորեն կապված է անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հետ: Այդ պատճառով փաստաբանական ծառայությունների հարկային բեռի կտրուկ ավելացումը չի կարող դիտարկվել միայն

բյուջետային մուտքերի ավելացման կամ հարկային համակարգերի հավասարեցման տեսանկյունից: Այն անմիջականորեն առնչվում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության, իրավաբանական օգնություն ստանալու և արդար դատաքննության իրավունքների գործնական իրացմանը:

Օրենսդրական փոփոխություններին նախորդած փուլում մասնագիտական համայնքի, ՀՀ փաստաբանների պալատի, Մարդու իրավունքների պաշտպանի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից բարձրացվել են մի շարք էական մտահոգություններ, որոնք վերաբերում էին փաստաբանական գործունեության՝ սովորական բիզնես գործունեության հետ նույնացմանը, ծառայությունների հնարավոր թանկացմանը, անհատ փաստաբանների գործունեության դժվարացմանը, Pro Bono ծառայությունների կրճատման ռիսկերին, ինչպես նաև Հանրային պաշտպանի գրասենյակի վրա լրացուցիչ ծանրաբեռնվածության առաջացմանը: Չնայած այդ մտահոգություններին՝ օրենքն ընդունվել է առանց մարդու իրավունքների և արդարադատության մատչելիության վրա դրա ազդեցության համապարփակ գնահատման: Ըստ փաստաբանական համայնքի՝ օրենքի ընդունման գործընթացում պատշաճ կերպով չի գնահատվել փաստաբանական գործունեության առանձնահատուկ իրավապաշտպան բնույթը և դրա ազդեցությունը քաղաքացիների՝ իրավաբանական օգնություն ստանալու և դատարանի մատչելիության իրավունքների վրա:

Հարկային փոփոխությունների սահմանադրականության հարցը բարձրացվել է Սահմանադրական դատարանում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և հետագայում նաև Ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդը դիմել են Սահմանադրական դատարան՝ վիճարկելով փաստաբանական ծառայությունները հարկման ընդհանուր համակարգ տեղափոխելու կարգավորումների սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, սակայն, չի իրականացրել խնդրի ամբողջական բովանդակային քննություն: Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի դեպքում գործի քննությունը մերժվել է՝ դիմումում հակասահմանադրականության հիմնավորումների բավարար չլինելու պատճառաբանությամբ, իսկ Ազգային ժողովի պատգամավորների մեկ հինգերորդի դիմումի առնչությամբ վարույթը կարճվել է՝ ի թիվս այլնի, հաշվի առնելով 2025 թվականի մարտի 26-ին Օրենսդրի կողմից սահմանված 5% բացառությունը անվճար իրավաբանական ծառայությունների մասով: Այսպես՝ 2025 թվականի մարտի 26-ին ընդունված ՀՕ-72-Ն օրենքով փորձ արվեց մեղմել անվճար իրավաբանական օգնության հարկման խնդիրը՝ սահմանելով սահմանափակ հարկային բացառություն: Մասնավորապես, նախատեսվեց, որ ԱԱՀ վճարող փաստաբանի կամ փաստաբանական

կազմակերպության կողմից օրենքով սահմանված կարգով տրամադրվող անվճար իրավաբանական ծառայությունները չեն հարկվի ԱԱՀ-ով, եթե դրանց արժեքը տվյալ հաշվետու ժամանակաշրջանում (մեկ ամսվա ընթացքում) չի գերազանցում նույն ժամանակահատվածում այդ փաստաբանի կամ կազմակերպության ԱԱՀ-ով հարկվող բոլոր գործարքների արժեքի 5%-ը: Այսինքն՝ փոփոխությունը ոչ թե ամբողջությամբ ազատեց անվճար իրավաբանական օգնությունը հարկումից, այլ սահմանեց միայն 5% շեմով սահմանափակ բացառություն:

Հետազոտությունը փաստում է, որ այս փոփոխությունը չի վերացրել խնդրի էությունը, քանի որ հարկային ընդհանուր բեռի ազդեցությունը վճարովի ծառայություններից օգտվող քաղաքացիների վրա, ինչպես նաև Pro Bono ծառայությունների իրական խրախուսման արդյունավետությունը մնացել են չլուծված: Այս պայմաններում հարկային փոփոխությունները շարունակում են առաջացնել ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածի տեսանկյունից լուրջ սահմանադրաիրավական ռիսկեր, քանի որ պետությունը, չներդնելով մեղմող կառուցակարգեր, իր իսկ հարկային քաղաքականությամբ վերացրել է իրավաբանական օգնության մատչելիության՝ նախկինում գործող հնարավորությունները:

Միաժամանակ, պետք է ընդգծել, որ 2025 թվականի մարտի 26-ի ՀՕ-72-Ն օրենքով ոչ միայն սահմանվեց անվճար ծառայությունների մասով 5% շեմով հարկային բացառություն, այլև Հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածում կատարված լրացմամբ շրջանառության հարկի համակարգից դուրս մնացին ավելի լայն շրջանակի սուբյեկտներ՝ ներառյալ «69. Իրավաբանական և հաշվապահական գործունեություն» իրականացնողները: Սա ևս հաստատում է, որ հարկային նոր քաղաքականությունը ոչ թե միայն փաստաբանական համայնքի առանձին հատվածի, այլ իրավաբանական ծառայությունների ամբողջ շուկայի կառուցվածքային վերափոխման պատճառ է դարձել:

Հետազոտության կարևոր եզրահանգումներից մեկն այն է, որ հարկային նոր քաղաքականությունը հանգեցրել է իրավաբանական ծառայությունների շուկայի կառուցվածքային փոփոխությունների: Պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկայում տեղի է ունեցել ԱԱՀ վճարող սուբյեկտների թռիչքային աճ՝ 2024 թվականի վերջի 91-ից 2025 թվականի վերջին հասնելով 1738-ի (շուրջ 19 անգամ աճ):

Միաժամանակ, հետազոտության արդյունքները վկայում են անհատ փաստաբանների գործունեության մոդելի թուլացման և շուկայի որոշակի կորպորատիվացման մասին: Մասնավորապես, 2025 թվականի ընթացքում գործունեությունը ժամանակավոր դադարեցնելու դիմում են ներկայացրել 171 ԱՁ

(յուրաքանչյուր 1 նոր գրանցվող ԱԶ-ի դիմաց գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դիմում է ներկայացրել ավելի քան 2 ԱԶ)՝ հանգեցնելով անհատ փաստաբանների գործունեության մոդելի նվազման: Այս ցուցանիշը հատկապես մտահոգիչ է մարգային կտրվածքով. 2025 թվականի ընթացքում դադարեցված 171 ԱԶ-ներից 56-ը բաժին է ընկնում մարզերին (այդ թվում՝ Արարատում՝ 9, Կոտայքում՝ 7, Շիրակում՝ 7, Սյունիքում՝ 6, Լոռիում՝ 5 և այլն), ինչը վկայում է մարզերում անհատ փաստաբանների գործունեության մոդելի թուլացման և շուկայի կենտրոնացման ռիսկերի մասին: ԱԱՀ դաշտում հաշվապահական հաշվառման ծախսերը միայնակ հոգալու անհնարինության պատճառով անհատ փաստաբանները ստիպված են եղել կա՛մ հիմնադրել ընկերություններ, կա՛մ միավորվել խոշոր փաստաբանական գրասենյակներում (2025 թ. ընթացքում գրանցվել է 187 նոր իրավաբանական անձ): Տեղի է ունեցել նաև շուկայի կենտրոնացում Երևանում (ԱԱՀ վճարող ընկերությունների 80%-ը գործում է մայրաքաղաքում): Հետազոտությունը չի սահմանափակվում միայն թվային արձանագրումով, այլ նաև ցույց է տալիս, որ ԱԱՀ դաշտում գործելու համար անհրաժեշտ հաշվապահական և վարչարարական պահանջները հատկապես ծանր են անհատ փաստաբանների համար:

Հարկային բեռի ազդեցությունն առավել տեսանելի է ծառայությունների արժեքի բարձրացման հարցում: 2025 թ. ավարտին իրավաբանական գործունեության ոլորտից հավաքագրված ԱԱՀ մուտքերը կազմել են 3,239,481,204 ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ արձանագրել է շուրջ 187% աճ: Հարցված փաստաբանների պատասխանները և փորձագիտական հարցազրույցները ցույց են տալիս, որ հարկային բեռի աճը փաստաբանական ծառայությունների թանկացման հիմնական գործոններից մեկն է, թեև որոշ դեպքերում այն կարող է համադրվել նաև այլ գործոնների հետ՝ դատավարությունների տևողության, հաշվապահական ծախսերի, ընդհանուր գնաճի, աշխատավարձերի բարձրացման և շուկայի ընդհանուր ծախսային կառուցվածքի փոփոխության հետ: Հետազոտության շրջանակում արձանագրված տվյալներով՝ փաստաբանական ծառայությունների սակագները մի շարք դեպքերում աճել են մոտավորապես 30-50%-ով:

ԱԱՀ-ի ազդեցությունը հատկապես ծանր է ֆիզիկական անձանց համար: Կորպորատիվ հաճախորդների դեպքում ԱԱՀ-ն որոշ դեպքերում կարող է հաշվանցվել կամ ներառվել նրանց ընդհանուր հարկային և հաշվապահական պլանավորման մեջ: Մինչդեռ ֆիզիկական անձինք, հատկապես միջին և ցածր եկամուտ ունեցող քաղաքացիները, ԱԱՀ-ի վերջնական կրողներն են: Քանի որ փաստաբանական

ծառայությունները, որպես կանոն, չունեն այնպիսի զգալի նյութական ծախսեր, որոնք կարող են էականորեն հաշվանցվել, հարկային բեռի զգալի մասը գործնականում տեղափոխվում է ծառայության վերջնական սպառողի՝ քաղաքացու վրա: Այս հանգամանքը իրավաբանական օգնությունը դարձնում է ավելի դժվար հասանելի հատկապես այն անձանց համար, ովքեր չունեն բավարար ֆինանսական միջոցներ, սակայն չունեն նաև օրենքով սահմանված անվճար օգնության շահառուի կարգավիճակ:

Հետազոտությունը նաև առանձնացնում է անվճար իրավաբանական օգնության և Pro Bono ծառայությունների ոլորտում առաջացած խնդիրները: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ անվճար իրավաբանական ծառայությունների մասով 5% շեմով հարկային բացառության մեխանիզմը գործնականում արդյունավետ չի աշխատում: Ըստ ՊԵԿ պաշտոնական տվյալների՝ 2025 թ. ամբողջ տարվա ընթացքում ՀՀ-ում գործող 1738 ԱԱՀ վճարող սուբյեկտներից այդ արտոնությունից (ԱԱՀ-ի հաշվարկի 20-րդ կետով՝ անվճար օգնության մասով հարկային բազայի նվազեցում) օգտվել է ընդամենը 1 ԱՀ, 3 ՍՊԸ և 4 ՓԲԸ (սուբյեկտների ընդամենը 0.46%-ը), իսկ մարզերում ցուցանիշը հավասար է զրոյի: Սա վկայում է, որ նախատեսված արտոնությունը լայն կիրառություն չի ստացել և չի կարող դիտարկվել որպես Pro Bono համակարգի արդյունավետ խրախուսման գործիք:

Խնդիրը պայմանավորված է ոչ միայն 5% շեմի սահմանափակ չափով, այլև մեխանիզմի վարչարարական բարդությամբ և շահառուների նեղ շրջանակով: Անվճար իրավաբանական ծառայությունների տրամադրման հարկային արտոնությունը կապակցված է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված շահառուների շրջանակի հետ: Այդ շրջանակը չի ընդգրկում բոլոր այն անձանց, ովքեր իրականում ունեն սոցիալական կարիք կամ առնչվում են մարդու հիմնարար իրավունքների խախտումների հետ, սակայն չեն համապատասխանում օրենքով սահմանված կոնկրետ խմբերին: Արդյունքում ձևավորվում է մի իրավիճակ, երբ բազմաթիվ քաղաքացիներ չեն կարողանում օգտվել ո՛չ վճարովի ծառայություններից՝ դրանց բարձր արժեքի պատճառով, ո՛չ էլ անվճար օգնությունից՝ իրավական չափանիշներին չհամապատասխանելու պատճառով:

Առցանց հարցման և փորձագիտական հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ հարկային վարչարարության ռիսկերը և լրացուցիչ հարկային բեռը փաստաբանների մի մասին դրդել են կրճատել կամ վերանայել անվճար ծառայությունների տրամադրման պրակտիկան: Առցանց հարցման տվյալներով, փաստաբանների ավելի քան 70%-ը կրճատել է անվճար ծառայությունների ծավալը առնվազն 50%-ով՝ հարկային վարչարարության ռիսկերի և բեռի պատճառով: Այս միտումը հատկապես մտահոգիչ է,

քանի որ մասնավոր փաստաբանների կողմից կամավոր անհատույց օգնությունը մինչ այժմ որոշակիորեն լրացրել է պետական անվճար օգնության համակարգի բացերը:

Հանրային պաշտպանի գրասենյակի վիճակը հետազոտության առանցքային մտահոգություններից է: Մասնավոր իրավաբանական ծառայությունների թանկացման և Pro Bono աջակցության կրճատման պայմաններում անվճար իրավաբանական օգնության պահանջարկի հիմնական ծանրությունը տեղափոխվում է Հանրային պաշտպանի գրասենյակի վրա: Սակայն ՀՊԳ-ն գործում է ծայրահեղ ծանրաբեռնվածության պայմաններում. օրինակ՝ 2025 թ. ՀՊԳ վարած գործերի քանակը հասել է 32,447-ի: Միննույն ժամանակ 2025 թվականի բյուջեով չի պահպանվել 2024 թվականի երկրորդ կեսին ՀՊԳ-ին հատկացված լրացուցիչ հաստիքային ֆինանսավորումը, ինչի հետևանքով հանրային պաշտպանների հաստիքների թիվը 84-ից նվազել է 73-ի: Աշխատավարձերի ցածր մակարդակը և մարզային նստավայրերի աշխարհագրական հսկայական հեռավորությունները (օրինակ՝ Սյունիքում, Գեղարքունիքում) ավելի են խորացնում համակարգի ինստիտուցիոնալ խնդիրները: Մարզերում հանրային պաշտպանների աշխարհագրական հասանելիությունը, ճանապարհային հեռավորությունները, ցածր աշխատավարձերը և մասնագիտական ռեսուրսների սակավությունը լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում:

Հետազոտությունն արձանագրում է, որ ՀՀ-ում անվճար իրավաբանական աջակցություն տրամադրում են նաև իրավաբանական կլինիկաները և հասարակական կազմակերպությունները: Սակայն այս սուբյեկտների ներուժը չի կարող փոխարինել պետական կամ մասնագիտական կայուն համակարգին: Իրավաբանական կլինիկաները հիմնականում կենտրոնացված են Երևանում, սովորաբար տրամադրում են խորհրդատվություն և որոշ դեպքերում աջակցում դատական փաստաթղթերի պատրաստմանը, սակայն չեն իրականացնում լիարժեք դատական ներկայացուցչություն: Հասարակական կազմակերպությունները, իրենց հերթին, հաճախ ունեն սահմանափակ մարդկային, ֆինանսական և տարածքային ռեսուրսներ, գործում են ծրագրային և դրամաշնորհային ֆինանսավորման շրջանակում և սովորաբար կենտրոնանում են կոնկրետ թիրախային խմբերի կամ թեմատիկ ուղղությունների վրա: Ուստի պետությունը չի կարող արդարադատության մատչելիության ապահովման բեռը փաստացի տեղափոխել քաղաքացիական հասարակության վրա:

Փաստաբանական ծառայությունների հարկային բեռի ավելացման հետևանքները պետք է դիտարկվեն նաև այլ զուգահեռ համակարգային խոչընդոտների համատեքստում:

Այս խոչընդոտներից են դատարան դիմելու համար պետական տուրքերի բազմապատիկ աճը, որը նույնիսկ անվճար փաստաթան ունենալու դեպքում դատարանը դարձնում է անհասանելի խոցելի խմբերի համար, մարզային դատարանների 9 նստավայրերի փակումը (Աշոցք, Տաշիր, Թալին, Արթիկ, Մարտունի, Վեդի, Եղեգնաձոր, Սիսիան, Մեղրի), ինչը քաղաքացիների և փաստաբանների համար առաջացնում է հսկայական ճանապարհածախս, քաղաքացիական և վարչական դատավարությունների պարտադիր էլեկտրոնացումը, ինչը տեխնիկական հմտություններ կամ սարքավորումներ չունեցող անձանց համար դժվարացնում է ինքնուրույն դատարան դիմելու հնարավորությունը: Անմատչելի են նաև վեճերի լուծման կամ իրավունքների ապահովման արտադատական մեխանիզմները՝ մասնավորապես հաշտարարությունը և նոտարական ծառայությունները: Հաշտարարության ինստիտուտը, որը կոչված է բեռնաթափելու դատական համակարգը և ապահովելու արագ ու մատչելի լուծումներ, գործնականում կրկին ծախսատար է և հանրության կողմից ոչ բավարար չափով կիրառվող: Նմանատիպ խնդիրներ առկա են նաև նոտարական ծառայությունների ոլորտում, որտեղ մատուցվող ծառայությունների բարձր գները, որոնք պայմանավորված են նաև վերջիններիս հարկային բեռի աճով, քաղաքացիների համար դրանք դարձնում են դժվար հասանելի: Արդյունքում, նոտարները հաճախ խուսափում են օրենքով իրենց վերապահված բարդ գործառույթներ իրականացնելուց՝ պատճառաբանելով դրանց բարդությունը և քաղաքացիներին ուղղորդելով դեպի արդեն իսկ ծանրաբեռնված դատական համակարգ:

Ձուգահեռ ընթացող խոչընդոտների հանրագումարով արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում վերածվել է շքեղության, ինչը քաղաքացիներին ստիպում է իրենց իրավունքների պաշտպանության համար դիմել ծայրահեղ քայլերի կամ կամավոր հրաժարվել իրենց իրավունքների պաշտպանությունից՝ հանգեցնելով խախտված իրավունքների վերականգնման գործնական անհնարինության ևս և համակարգային իրավական անպաշտպանվածության:

Փաստաբանական ծառայությունների հարկային բեռի ավելացումը միայն հարկային քաղաքականության հարց չէ: Այն ունի անմիջական ազդեցություն արդարադատության մատչելիության, իրավաբանական օգնության հասանելիության և անձանց խախտված իրավունքների արդյունավետ վերականգնման հնարավորության վրա: Թեև պետությունն ունի հարկային քաղաքականություն իրականացնելու լայն հայեցողություն, այդ հայեցողությունը պետք է իրականացվի այնպես, որ չխաթարի հիմնական իրավունքների գործնական և արդյունավետ իրացումը: Հարկային մուտքերի ավելացումը չի կարող ինքնին արդարացնել այնպիսի քաղաքականությունը, որը բավարար մեղմող մեխանիզմների

բացակայության պայմաններում իրավաբանական օգնությունը դարձնում է քաղաքացիների լայն շրջանակի համար դժվար հասանելի:

Հետազոտության ընդհանուր եզրահանգումն այն է, որ Հայաստանում արդարադատության մատչելիության համակարգը ներկայումս բախվում է փոխկապակցված ֆինանսական և ինստիտուցիոնալ խոչընդոտների: Փաստաբանական ծառայությունների թանկացումը, Pro Bono աջակցության կրճատման ռիսկերը, Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը և ռեսուրսների նվազումը, պետական տուրքերի աճը, մարզային հասանելիության խնդիրները և էլեկտրոնային դատավարության գործնական դժվարությունները միասին ձևավորում են մի իրավիճակ, որտեղ իրավունքի դատական պաշտպանությունը բազմաթիվ անձանց համար դառնում է անմատչելի:

Հետևաբար, անհրաժեշտ է վերանայել գործող հարկային և ինստիտուցիոնալ մոտեցումները՝ ապահովելու համար հարկային քաղաքականության և հիմնական իրավունքների պաշտպանության միջև համարժեք հավասարակշռություն: Պետությունը պետք է ներդնի այնպիսի օրենսդրական, ֆինանսական և կազմակերպական մեխանիզմներ, որոնք մի կողմից չեն խոչընդոտի փաստաբանական գործունեության բնականոն իրականացումը, իսկ մյուս կողմից կապահովեն, որ իրավաբանական օգնությունը մնա հասանելի ոչ միայն բարձր եկամուտ ունեցող անձանց և կորպորատիվ հաճախորդների, այլև սոցիալապես խոցելի, միջին եկամուտ ունեցող, կամ մարզերում բնակվող անձանց համար: Առանց նման համակարգային վերանայման՝ արդարադատության մատչելիության սահմանադրական երաշխիքը վտանգված է դառնալ ձևական, իսկ խախտված իրավունքների վերականգնումը՝ գործնականում դժվար իրագործելի:

Առաջարկություններ

ՀՀ ազգային ժողովին, Կառավարությանը՝

1. Վերանայել ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սահմանափակումները՝ հանելով փաստաբանական ծառայություններ մատուցող հարկ վճարողներին շրջանառության հարկ վճարող համարվելու սահմանափակումներից և վերականգնելով նրանց համար շրջանառության հարկի համակարգից օգտվելու հնարավորությունը մինչև օրենքով սահմանված շրջանառության շեմը գերազանցելը: Որպես ելակետ կարող է դիտարկվել նախկինում գործող 115 միլիոն ՀՀ դրամ շեմը՝ վերանայելով և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտելով դրա չափը: Շրջանառության շեմը վերանայելիս հաշվի առնել փաստաբանական ծառայությունների ոլորտի առանձնահատկությունները, բնակչության վճարունակությունը, մարզային շուկայի վիճակը և արդարադատության մատչելիության սահմանադրական երաշխիքները:

2. Վերանայել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածում կամավոր անհատույց իրավաբանական օգնության հասկացությունը՝ հստակ ամրագրելով, որ կամավոր անհատույց իրավաբանական օգնությունը չի սահմանափակվում միայն ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաշվառվող, կազմակերպվող կամ խրախուսվող ծրագրերով: Ամրագրել, որ փաստաբանը կարող է իր մասնագիտական անկախության շրջանակում կամավոր և անհատույց իրավաբանական օգնություն տրամադրել նաև իր նախաձեռնությամբ՝ օրենքով սահմանված ընդհանուր չափանիշներին համապատասխան:

3. Ընդլայնել անվճար և կամավոր անհատույց իրավաբանական օգնության շահառուների շրջանակը՝ այն չսահմանափակելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված շահառուների շրջանակով, այլ և վերանայել նշված շրջանակը՝ ըստ իրավական պաշտպանության իրական կարիքի, խոցելիության, մարդու իրավունքների ենթադրյալ խախտման և գործի հանրային նշանակության չափանիշների: Շրջանակի վերջնական բովանդակությունը որոշել ՀՀ փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի, մասնագիտացված հասարակական կազմակերպությունների, իրավաբանական կլինիկաների և այլ շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում:

4. Վերանայել կամավոր անհատույց իրավաբանական օգնության հարկման գործող կարգավորումը՝ վերացնելով ՀՀ հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված 5%

շեմային սահմանափակումը և նախատեսելով, որ փաստաբանների կողմից առանց վարձատրության տրամադրվող pro bono իրավաբանական օգնությունը չի ձևավորում հարկման բազա և ամբողջությամբ ազատվում է հարկումից, եթե այն տրամադրվում է անձի իրավական պաշտպանության, մարդու իրավունքների ենթադրյալ խախտման վերականգնման կամ հանրային նշանակություն ունեցող իրավական խնդրի լուծման նպատակով:

5. «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատել ՀՀ Փաստաբանների պալատի կողմից Հանրային պաշտպանի գրասենյակի պահանջների բավարարման համար հայցված անհրաժեշտ բյուջեի չափը, այդ թվում՝ հանրային պաշտպանների հաստիքների համալրման նպատակով՝ հիմնվելով ՀՊԳ-ի փաստացի ծանրաբեռնվածության, մարզային հասանելիության, գործերի բարդության և անվճար իրավաբանական օգնության պահանջարկի աճի գնահատման վրա:

6. Վերանայել հանրային պաշտպանների վարձատրության համակարգը՝ ապահովելով ոչ միայն պաշտոնային դրույքաչափի, այլև փաստացի վարձատրության համարժեքությունը Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի վարձատրությանը: Հանրային պաշտպանների համար սահմանել համարժեք հավելավճարների, հավելումների և սոցիալական երաշխիքների մեխանիզմ, այդ թվում՝ մարզերում աշխատանքի հետ կապված լրացուցիչ փոխհատուցումներ՝ ապահովելու համար արժանապատիվ վարձատրություն, մասնագիտական կայունություն և համակարգից կադրերի արտահոսքի կանխարգելում:

ՀՀ ազգային ժողովին, ՀՀ կառավարությանը, Փաստաբանների պալատին՝

7. ՀՀ փաստաբանների պալատի, մասնագիտացված հասարակական կազմակերպությունների, իրավաբանական կլինիկաների և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող այլ շահագրգիռ կողմերի հետ քննարկման արդյունքում մշակել Pro Bono իրավաբանական օգնության չափանիշների նոր մոդել, որը կհամատեղի փաստաբանի մասնագիտական ազատությունը, շահառուների իրական կարիքների գնահատումը, ծառայության որակի նվազագույն երաշխիքները և հարկային ռիսկերի բացակայությունը:

8. Ներդնել կամավոր անհատույց իրավաբանական օգնության հաշվառման պարզեցված էլեկտրոնային համակարգ, որը կունենա ոչ թե թույլատրող, այլ հաշվառող և խրախուսող բնույթ:

Կառավարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը, ՀՀ ֆինանսների նախարարությանը

9. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշմամբ սահմանված կարգավորման ազդեցության գնահատման կարգում կատարել փոփոխություններ՝ նախատեսելով, որ փաստաբանական, իրավաբանական ծառայություններին առնչվող կամ արդարադատության հասանելիության վրա ազդեցություն ունեցող հարկային և ֆինանսական կարգավորումներին վերաբերող նախագծերը պարտադիր ենթարկվեն մարդու իրավունքների և արդարադատության մատչելիության վրա ազդեցության մասնագիտական գնահատման՝ անկախ նախագծի հեղինակից կամ նախաձեռնող սուբյեկտից: Գնահատումը պետք է ներառի ազդեցությունը դատարանի մատչելիության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի, անվճար իրավաբանական օգնության համակարգի, pro bono աջակցության, ֆիզիկական անձանց, ցածր և միջին եկամուտ ունեցող խմբերի, մարգային բնակիչների և այլ խոցելի խմբերի վրա, իսկ արդյունքները պետք է ներառվեն եզրակացության, նախագծի հիմնավորման և հանրային քննարկման նյութերի մեջ:

10. Հաշվի առնելով, որ «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքով նախատեսված հարկային փոփոխությունները արդեն ուժի մեջ են մտել՝ Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի, Մարդու իրավունքների պաշտպանի և մասնագիտացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավմամբ իրականացնել այդ կարգավորումների հետագա ազդեցության համապարփակ գնահատում: Գնահատումը պետք է պարզի հարկային բեռի ավելացման փաստացի ազդեցությունը անձանց դատական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացման, փաստաբանական ծառայությունների սակագների իրական աճի, բնակչության վճարունակության հետ դրանց համադրելիության, ցածր և միջին եկամուտ ունեցող խմբերի, փախստականների և այլ խոցելի խմբերի կարիքների, կամավոր անհատույց իրավաբանական օգնության ծավալների, Հանրային պաշտպանի գրասենյակի

ծանրաբեռնվածության, ինչպես նաև 5% շեմով հարկային բացառության կիրառելիության
և արդյունավետության վրա:

Հավելված 1

ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալները՝ 2023, 2024, 2025թ. (սեպտեմբեր ամիսների վերաբերյալ) ԱԱՀ մուտքերի, իրավաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարող կազմակերպությունների վերաբերյալ:

Հավելված 2

ՊԵԿ-ի կողմից ստացված տվյալները՝ 2025թ. ԱԱՀ մուտքերի, իրավաբանական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնող ԱԱՀ վճարող կազմակերպությունների վերաբերյալ:

Հավելված 3

ՊԵԿ գրությունը՝ 2025թ-ի ԱԱՀ-ի հաշվարկների 20-րդ կետում «Օրենսգրքով սահմանված այլ հիմք» նշագրումով «[Բ]. Պակասեցում» նշած և M69.10.0 գործունեության տեսակ հայտարարագրած հարկ վճարողների քանակի վերաբերյալ: